# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 30 (1580) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 25, 2012
VOLUME 32, NO. 30 (1580) SATURDAY, AUGUST 25, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ



*Ձախէն աջ՝ Վարչապետ Տիգրան Սարգսեան, Սեդրակ Աճէմեան եւ Վազգէն Գալթագճեան*

*Օգոստոս 17-ին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեան հանդիպում ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճեմեանի եւ դիւանի անդամ Վազգէն Գալթագճեանի հետ:*

*Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ յատկապէս Սուրիայէն Հայաստան տեղափոխուած հայերուն առնչուող հարցերը: Տիգրան Սարգսեան անդրադարձաւ Սուրիոյ մէջ տիրող իրավիճակին եւ ներկայացուց այնտեղի հայ համայնքի անվտանգութեան ապահովման հետ կապուած կառավարութեան ձեռնարկած քայլերը:*

*ՍԴՀԿ անդամները իրենց գոհունակութիւնը յայտնեցին սուրիահայ համայնքին օգտակար ըլլալու գծով ՀՀ կառավարութեան ձեռնարկած քայլերուն առնչութեամբ, ինչպէս նաեւ պատրաստակամութիւն յայտնեցին համագործակցելու գործադիրի հետ՝ սուրիահայ համայնքի խնդիրները լուծելու հարցով:*

*Հնչակեան պատուիրակութեան անդամները այցելեցին նաեւ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին:*

*Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սուրիոյ հայ համայնքին առնչուող հարցերը:*

*Նախարար Յակոբեան ողջունելով հիւրերը, յայտնեց, որ նախարարութեան մէջ ստեղծուած է սուրիահայերու հիմնախնդիրներով զբաղող աշխատանքային խումբ:*

*Շար.ը էջ 5*

## ՀԻՄՆՈՒԵՑԱՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՀԱՄԱԴՐՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

*9 Օգոստոս 2012ին, Լոս Անճելըսի մէջ կազմուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100ամեակի յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ համադրել եւ ղեկավարել 24 Ապրիլ 2015ին, ԱՄՆի Արեւմտեան ափին վրայ կազմակերպուելիք ոգեկոչման ձեռնարկները՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան:*

*Յանձնախումբի կազմութիւնը արդիւնքն էր համայնքային խորհրդակցութիւններու, զորս կատարուեցան շրջանէն ներս գործող հայկական մեծագոյն կառոյցներու ղեկավարներուն միջեւ: Խիստ էական նկատուող այս յանձնախումբը, միացեալ ռազմավարական ծրագիրի մը տակ պիտի կեդրոնացնէ Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին նուիրուած ձեռնարկներու կազմակերպական ջանքերը:*

*Յանձնախումբին մէջ ընդգրկուած են.*

* *Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ԱՄՆի Արեւմտեան Թեմը*
* *Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կիլիկիոյ Թեմը*
* *Հայ Կաթողիկէ Եկեղեցին*
* *Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւնը*
* *Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (ԱՄՆի Արեւմտեան շրջան)*
* *Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը*
* *Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը*
* *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ԱՄՆի Արեւմտեան շրջան)*
* *Հայ Օգնութեան Միութիւնը (ԱՄՆի Արեւմտեան շրջան)*
* *Հայաստան Համահայկական Հիմնադրամը (ԱՄՆի Արեւմտեան շրջան)*

*Շար.ը էջ 7*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ ԻՐԱՆԻ ԴԷՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՇՐՋԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Հայաստանի Հանրապետութեան Կեդրոնական դրամատունը Օգոստոս 21-ին արձագանգած է հայկական եւ իրանական դրամատնային համակարգերու համագործակցութեան վերաբերեալ »Ռոյթըրզ» գործակալութեան նոյն օրը հրապարակած յօդուածին, որ կ'անդրադառնայ Հայաստանի եւ Իրանի դրամատուներուն միջեւ կապին: «Իրան կը նայի դէպի Հայաստան՝ շրջանցելու դրամատնային պատժամիջոցները» վերնագիրը կրող յօդուածը կը գրէ, որ «Իրան հետաքրքրութիւն կը ցուցաբերէ հարեւան Հայաստանի՝ 3.3 միլիոն բնակչութեամբ այդ լեռնային երկրի հանդէպ, այն ժամանակահատուածին, երբ արեւմտեան պետութիւնները եւ հետախուզական ծառայութիւնները կը զօրացնեն Թեհրանի շրջափակումը՝ փորձելով խեղդել երկրի միջուկային ծրագրերը»:*

*«Այսպիսի հարեւանը, նախկին Խորհրդային միութենէն, որ առեւտրային կապերով կապուած է Իրանի հետ եւ կ'աշխատի սերտ կապեր ստեղծել Եւրոպական միութեան հետ, կրնայ Թեհրանի համար դիւրացնել օտարերկրեայ յաճախորդներէն ստացուող եւ անոնց կատարուող վճարումները թաքցնելու եւ Իրանի միջուկային եւ հրթիռային ծրագիրները կանխել փորձող Արեւմտեան հետախուզական ծառայութիւնները խաբելու գործընթացը: Հայ պաշտօնեաները կը հերքեն Իրանի հետ ապօրինի դրամատնային յարաբերութիւններ ունենալու մասին տեղեկութիւնները: Հակառակ անոր՝ ամերիկեան պաշտօնեաները պարբերաբար իրենց հայ գործընկերներուն կը սպառնան խստացնել ֆինանսական վերահսկողութիւնը»,- ըսուած է յօդուածին մէջ:*

*«Ռոյթըրզ» նաեւ կը նշէ, որ հայկական ճշգրիտ դրամատուներու անուններ, մասնաւորապէս*

*Շար.ը էջ 5*

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒԸ ԿՐՆԱՅ ԴԱՐՁԵԱԼ ՔՆՆՈՒԻԼ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

*Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Լորան Ֆապիւս յայտնեց, թէ չի բացառեր, որ Փարիզի մէջ դարձեալ քննուի Հայկական Ցեղասպանութեան ուրացումը քրէականացնելու մասին օրինագիծ մը վաւերացնելու հարցը:*

*Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէտ Տաւուտօղլուի հետ Անգարայի մէջ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ընթացքին Ֆապիւս պատասխանած է լրագրողներէն մէկուն այն հարցումին, թէ Ֆրանսայի մէջ իբրեւ թէ կը խօսուի այն մասին, որ նման օրինագիծ այլեւս պիտի չներկայացուի խորհրդարան, հակառակ անոր, որ նախագահ Ֆրանսուա Հոլանտ յայտարարած էր, թէ բանաձեւը պիտի վերադառնայ օրակարգ:*

*Իբրեւ պատասխան, Լորան Ֆապիւս նախ յիշեցուց, որ նախընտրական շրջանին նման յայտարարութիւններ կատարած են թէ? Նիքոլա Սարքոզին եւ թէ Հոլանտը, ապա աւելցուց. «Կը հաւատամ, որ կը գտնուին լուծումներ, որոնք զուրկ են զգացականութենէ»՝ չհերքելով նոր օրինագիծի մը հնարաւորութիւնը:*

*Ֆրանսայի խորհրդարանն ու Ծերակոյտը վաւերացուցած էին ցեղասպանութիւններու, ներառեալ՝ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծ մը, սակայն անցած 29 Փետրուարին, Ֆրանսայի Սահմանադրական խորհուրդը օրինագիծը ոչ սահմանադրական նկատած էր:*

## ՕԳՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՔ ԵՐԿԱՐԵՆՔ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ

*Սուրիոյ մէջ աւելի քան 17 ամիսներու իրադարձութիւնները վերջին շաբաթներուն հասած են աղէտալի զարգացումներու ու անոնց ահաւոր հետեւանքները ծանօթ են բոլորիս: Երկիրը զինեալ դէպքերու կրակէ օղակին մէջ բռնած կացութենէն գլխաւոր տուժողն է անմեղ բնակչութիւնը, որուն մաս կը կազմէ նաեւ հայ համայնքը:*

*Սուրիոյ Հայ համայնքը ունի դարաւոր պատմութիւն, եւ իր պատմական իրագործումներով, իւրայատուկ տեղ ու ներդրում ունի հայկական գաղթաշխարհի պատմութեան մէջ: Յատկապէս Ցեղասպանութենէն ետք աւելի մեծ ծաւալ ստացած այս գաղութը, հայավայել աշխատանքով ու ջանասիրութեամբ, ընդհանրապէս բարօր վիճակ կերտած է սեփական ընտանիքներու թէ ազգային կառոյցներու՝ եկեղեցիներու, դպրոցներու հաստատումով: Այսօր, ծանօթ իրադարձութեանց հետեւանքով, գաղութը մատնուած է տագնապալի վիճակի: Սուրիոյ մեր գաղութի կազմակերպութիւնները, հաւատարիմ՝ մեր ազգային նկարագիրին,*

*Շար.ը էջ 7*

# ԵՐԲ ՔԱՒՈՒԹԵԱՆ ՆՈԽԱԶ ՓՆՏՌԵԼՈՒՑ ԱՒԵԼԻԻՆ ԸՆԴՈՒՆԱԿ ՉԵՍ

*ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ*

*Աշխարհահռչակ շանսոնյէ Շառլ Ազնաւուրը Օգոստոսի 16-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում «Ռաբաթ» պատմական ամրոց-յուշահամալիրի բացման արարողութեանը մասնակցել եւ համերգ է տուել՝ շատ լաւ տեղեակ լինելով դրա նկատմամբ հայկական որոշ շրջանակների դժգոհութիւնից, անգամ իրեն հասցէագրուած նախազգուշական նամակից:*

*Ազնաւուրին յորդորում էին այդ միջոցառմանը չմասնակցել յատկապէս այն պատճառով, որ հակառակ յուշահամալիրի տարածքում մզկիթի, սինագոգի եւ ուղղափառ քրիստոնէական եկեղեցու վերանորոգմանը, վրացական իշխանութիւններն աչքաթող են արել նոյն տարածքում գտնուող հայկական կաթոլիկ եկեղեցին, որն աւերուել է գրեթէ ամբողջութեամբ: Եւ քանի որ յուշահամալիրի վերանորոգման աշխատանքներում ներդրումներ է կատարել նաեւ Թուրքիան, հայկական մի շարք կազմակերպութիւններ այն համոզմունքն են յայտնում, որ հայազգի աշխարհահռչակ շանսոնյէն չպէտք է մասնակցի մի յուշահամալիրի բացման արարողութեան, որն ուղղուած է տարածաշրջանի հայկականութեան հերքմանը:*

*Այն, որ «Ռաբաթում» գտնուող հայկական կաթոլիկ եկեղեցին կարող էր իսկապէս վրացական իշխանութիւնների վարած, էթնիկ փոքրամասնութիւնների ու յատկապէս հայերի ազգային ու մշակութային ժառանգութեան իւրացման քաղաքականութեան հերթական զոհը լինել, ոչ ոք հերքել չի կարող: Սա ոչ առաջին եւ վստահաբար ոչ էլ վերջին դէպքը չէ: Սակայն դա Շառլ Ազնաւուրի մեղքը չէ:*

*«Ռաբաթի» վերանորոգման աշխատանքներն սկսել են գրեթէ 2007-ից: 2010-ին արդէն իսկ ահազանգեր հնչեցին, որ քանդման աշխատանքներ են կատարւում 12-րդ դարով թուագրուող հայկական այդ եկեղեցու՝ կաթողիկէ Երեւման Սուրբ Խաչի տարածքում: Ահազանգերի իսկութիւնն ստուգելու նպատակով անգամ Ախալցխա էր գործուղուել Հայաստանի մշակոյթի նախարարութեանն առընթեր պատմամշակութային ժառանգութեան գիտահետազոտական կենտրոնի տնօրէնը, ով հաստատել էր, որ եկեղեցու գոյութիւնն իսկապէս վտանգուած է:*

*Սակայն դրանից յետոյ այս թեման ընդհանրապէս փակուեց: Անգամ 2011թ. ամրանը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդի՝ Վրաստան կատարած միջեկեղեցական եւ հովուապետական վեցօրեայ այցի ընթացքում, այն փաստացի քննարկումների առարկայ չդարձաւ, թէեւ ամրոցում վերականգնողական աշխատանքներն այդ պահին էլ ընթանում էին: Հայկական կողմը փաստացի անգործութիւն է ցուցաբերել սոյդ Ախալցխայի «Ռաբաթ» յուշահամալիրում գտնուող այդ եկեղեցու աւերման փաստի նկատմամբ:*

*Եւ երբ Հայաստանի պետութիւնն ու եկեղեցին են նման վերաբերմունք դրսեւորում, «Ռաբաթի» բացմանը ելոյթ ունենալուց եւ իր անուամբ աստղի գետեղման պատուից Ազնաւուրի հրաժարուելը առնուազն խելամիտ չէր կարող լինել, որովհետեւ մերժման ոչ մի տրամաբանական բացատրութիւն տուեալ դէպքում գոյութիւն չունի: Ազնաւուրը չէր կարող իր վրայ վերցնել մի բեռ, որն առաջին հերթին հայկական պետութիւնն էր նետել իր ուսերից:*

*Անկախ նրանից՝ ինչ մեթոդներով է Վրաստանը վերանորոգել այդ պատմամշակութային, յիրաւի հիանալի համալիրը, այն խորհրդանշում է փոխըմբռնում եւ հանդուրժողականութիւն, ինչի վկայութիւնը երեք կրօնի՝ իսլամի, քրիստոնէութեան եւ յուդայականութեան հոգեւոր արժէքները նոյն համալիրում միաժամանակ մէկտեղելու իրողութիւնն է:*

*Ազնաւուրի կողմից նման խորհուրդ պարունակող յուշահամալիրի բացմանը մասնակցելը մերժելը չէր կարող չընկալուել որպէս նեղմիտ ազգայնականութեան դրսեւորում, ինչի սահմաններից նա միշտ դուրս է եղել: Ընդհակառակը, եթէ նրա քայլն անգամ դիտարկենք նոյն ազգայնականութեան պրիզմայով, ապա իր ներկայութեամբ ու ելոյթով Ազնաւուրը պարզապէս հաւաստում է, որ տարածաշրջանը թէ էթնիկ կառուցուածքով, թէ պատմաճարտարապետական նկարագրով եւ թէ աշխարհագրօրէն ու պատմականօրէն հայկական է: Սակայն խնդիրն իրականում դա չէ:*

*«Ռաբաթը» հիանալի իրականացուած բիզնես նախագիծ է՝ մի կողմից Վրաստանի պատմամշակութային արժէքները պահպանելու եւ մատուցելու, միւս կողմից դրանց հենքի վրայ տուրիզմը զարգացնելու առումով:*

*Շառլ Ազնաւուրը մեղք չունի, որ Հայաստանում նման մասշտաբային նախագծեր անցկացնելու ոչ ցանկութիւն, ոչ էլ կարողութիւն չկայ: Նա մեղք չունի, որ մերոնք անգամ ունեցածը չեն կարողանում պահպանել եւ ընդունակ են ստեղծել միայն ստամոքս լցնելու օբիեկտներ, որ անգամ եղած քիչ թէ շատ ներկայանալի արժէքները խեղդել են ենթակառուցուածքների խայտառակ անկատարութեամբ, դրանց ներսն ու շուրջը աղբանոցներ դարձնելով, երբեմն ուղղակի գաւառական ծիծաղելի եւրանորոգումներով:*

*Նա մեղք չունի, որ «Ռաբաթը» ոչ թէ Հայաստանում է վերածնւում, որ այստեղ երգի, այլ հարեւան երկրում, որտեղ են գտնւում իր արմատները: Եւ հենց «Ռաբաթի» վերականգնումն է ստիպում արձանագրելու, որ անցած 20 տարում նման մասշտաբային ոչ մի նախաձեռնութիւն Հայաստանում չի իրականացվել: Դա այն դէպքում, երբ զբօսաշրջութիւնը այսօր էլ համարւում է տնտեսութեան առաջնահերթ, ռազմավարական ուղղութիւններից մէկը:*

*Ազնաւուրին քննադատողները լռում են այս ամէնի կապակցութեամբ՝ փորձելով նրան դարձնել սեփական երկրի թերութիւնները կամայ թէ ակամայ քօղարկելու, դրա համար իրենց ունեցած պատասխանատուութիւնը թօթափելու միջոցը, քաւութեան նոխազը: Միշտ էլ աւելի հեշտ է դրանց դրսում փնտռել, քան ինքդ քո ներսում:*

*«ՀԵՏՔ»*

# ՔՈՉԱՐԵԱՆԻ ԿՂԶԻՆ

*ՀԱՅԿ ԱՐԱՄԵԱՆ*

*Հայկական մամուլում տեղեկութիւններ հրապարակուեցին, ըստ որոնց ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերդ Քոչարեանը կղզի է գնել Յունաստանում, որտեղ անցկացնում էր իր ամառային հանգիստը: Չի բացառւում, որ Քոչարեանը դրանով ցանկացել է համարժէք արձագանգել Արեւմտեան առաջատար երկրներին, որոնք Յունաստանին ճգնաժամից դուրս գալու համար առաջարկում էին վաճառել իր հազարաւոր կղզիները:*

*Զուգահեռ, Հայաստանում ընթացքի մէջ է Քոչարեանին վերադարձնելու «ազգովի խնդրելու» գործընթաց: Նախաձեռնողները յիշում են նրա օրօք «երանելի ժամանակները» եւ յայտարարում, որ միայն նա կարող է երկիրը հանել ճգնաժամից:*

*«Ազգովի խնդրելու» մեթոդաբանութիւնը հայկական միջավայրում նոր չէ: Առաջինն այդ առումով ՀԿԿ նախկին առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանն էր, որի վերադարձը քաղաքականութիւն բաւական յաղթական ստացուեց: Նա փաստացի յաղթեց Քոչարեանին՝ նախագահի ընտրութեանը, իսկ խորհրդարանական ընտրութեանը Հանրապետական կուսակցութեան հետ վերցրեց մեծամասնութիւն: Սակայն Հոկտեմբերի 27-ից յետոյ այս իրավիճակը փոխուեց:*

*Երկրորդը Լեւոն Տէր-Պետրոսեանն էր, որի վերադարձը ակտիւ քաղաքականութիւն նոյնպէս փաստացի յաղթական ստացուեց, սակայն իշխանութեան կոշտ քայլերն ու Տէր-Պետրոսեանի անվճռականութիւնն ի չիք դարձրին այդ յաղթական վերադարձը: Տէր-Պետրոսեանը վերածուեց «շարքային ընդդիմադիրի», իսկ Քոչարեանը յայտարարեց, որ նրան երեք անգամ յաղթել է:*

*Փաստացի, Քոչարեանն «ազգովի խնդրելու» մեթոդաբանութեան երկու «փորձ» ունի: Երկու դէպքում էլ փաստացի նա դարձաւ «յաղթող»: Այս տեսակէտից, հետաքրքիր է, որ նա ներկայում փորձում է «տեղաւորուել» Դեմիրճեանի ու Տէր-Պետրոսեանի «տեղում»: Հետաքրքիր է նրանով, որ նա անձամբ է համոզուել, որ մանաւանդ հայաստանեան իրականութեան մէջ «վերադարձը» եւ «ազգովի խնդրելն» ի վերջոյ յանգեցնում են բարդ ու վտանգաւոր իրավիճակների:*

*Միւս կողմից, հնարաւոր է, որ ունենալով «ազգովի խնդրելու» փորձը, Քոչարեանը մտածում է, որ ինքը կարող է խուսափել այդ իրավիճակներից եւ սահուն վերցնել իշխանութիւնը: Դրա համար կարծես թէ կան բոլոր նախադրեալները. Փութինը Ռուսաստանում վերադարձաւ, Հայաստանում քաղաքական դաշտն ամայացած է, Սերժ Սարգսեանին այդպէս էլ չի յաջողուել կառուցել սեփական իշխանական ու տնտեսական համակարգ: Ըստ ամենայնի, գրեթէ նոյն իրավիճակն է, ինչ 1997 թուականին, երբ վարչապետ նշանակուելուց յետոյ Քոչարեանը սկսեց աստիճանաբար իր ձեռքը վերցնել երկրի կառավարման լծակները:*

*Միւս կողմից, սակայն, ներկայում նրա վարչապետ դառնալու ծրագրերը կարծես թէ տապալուել են, իսկ առանց պետական-իշխանական լծակների Քոչարեանի համար չափազանց բարդ կը լինի: Դա է ցոյց տալիս նրա քաղաքական կարիերայի ընթացքը թէ Ղարաբաղում, թէ Հայաստանում: Ըստ այդմ, «հանրային աջակցութիւնը», որին Քոչարեանը երբեք էլ լուրջ չի վերաբերել, դառնում է անիմաստ մի դեկոր, քանի որ ոչ ոք, իր հերթին, չի կարող լուրջ ընդունել, որ Քոչարեանին «հանրային աջակցութիւնը» խիստ անհրաժեշտ է:*

*Կայ ի հարկէ Բարգաւաճ Հայաստանը, որը Մայիսի 6-ի ընտրութեան արդիւնքում ծանրակշիռ ներկայութիւն ապահովեց խորհրդարանում, եւ կայ ՀՀԿ-ն, որն ինչ որ պահի, ինչպէս եղել է բազմիցս, կարող է փոխել իր ճամբարը եւ հարել նրան, ով իրեն աւելի լաւ «կը կերակրի»: Իր հերթին, կարծես թէ կայ միտում, որ Սերժ Սարգսեանը մարզերում իշխանութիւնը յանձնում է ԲՀԿ-ին: Կայ նաեւ Ռուսաստանի գործօնը, որը Հայաստանը չկորցնելու համար պատրաստ է ցանկացած քայլի: Սակայն, այս ամէնը, եթէ ինչ որ ժամանակ արդիւնք է տուել, ապա ներկայում դժուար է ասել, թէ ինչ հետեւանքների ու վերջնարդիւնքի կը յանգեցնի:*

*Շատ բան է փոխուել թէ Հայաստանում, թէ աշխարհում, եւ կայ այդ փոփոխութիւններին համարժէք լինելու խնդիր: Միայն այդ դէպքում է հնարաւոր խուսափել ցնցումներից ու անցանկալի զարգացումներից: Սակայն հայկական քաղաքական դասի գործելակերպը ցոյց է տալիս, որ այն բաւական հեռու է նոր իրողութիւններին համարժէք լինելուց՝ դրանից բխող հետեւանքներով:*

*Այդ տեսակէտից, Էգէյեան ծովի կղզին ձեռք է բերում խիստ խորհրդանշական նշանակութիւն:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ՀԱՅԱՍՏԱՆ

### «ՍԻՎԻԼԻԹԱՍ»-Ը ՄՏԱԴԻՐ Է ԴԻՄԵԼ ՎԵՐԱԴԱՍ ԴԱՏԱԿԱՆ ԱՏԵԱՆՆԵՐԻՆ

*Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը շաբաթ օրը մերժել է «Սիվիլիթաս» հիմնադրամի՝ Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) որոշման բողոքարկումը:*

*Հիմնադրամի տնօրէն Սալբի Ղազարեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ որոշումը իրենց համար անակնկալ չէր:*

*«Ուղղակի մենք այս գործընթացին դիմել ենք, որովհետեւ մինչեւ վերջ պէտք է տանենք. միւս երկու ատեաններին էլ պէտք է դիմենք եւ դրանից յետոյ Եւրոպական դատարան պիտի գնանք, որովհետեւ սա արդէն անիմաստ ձեւ է քաղաքացիական հասարակութեանը, այս պարագայում՝ մամուլի ներկայացուցչի, հասարակական կազմակերպութեան գործունէութեանը խոչընդոտելու, չեղելու, թաղելու», - ասաց Ղազարեանը:*



«Սիվիլիթաս» հիմնադրամի Տօրէն Սալբի Ղազարեան

*Յիշեցնենք, «Սիվիլիթաս» հիմնադրամին առնչուող քրէական գործը ԱԱԾ-ի քննչական վարչութիւմ յարուցուել է փողերի լուացման, յանցաւոր ճանապարհով ստացուած առանձնապէս խոշոր չափերով եկամուտներին օրինականացնելու յատկանիշներով:*

*«Սիվիլիթաս»-ի տնօրէնը կրկին պնդեց, որ այս գործընթացը քաղաքական ենթատեքստ ունի:*

*«Որովհետեւ ուրիշ դէպք չկայ: Եթէ լինէր ուրիշ ինչ-որ հարց, պրոբլեմ, մեղադրանք, ամբաստանութիւն, կասկած, կարելի էր ուրիշ բան ենթադրել, բայց այստեղ ուրիշ բան չկայ, այստեղ չգիտես, թէ ինչ են փնտռում: Արդէն գործը մէջտեղից են սկսել, եւ հիմա փորձում են գտնել ինչ-որ բաներ, ինչ-որ պատճառներ, հետեւանքներ: Եւ ամենից անհեթեթն այն է, որ ըստ քննիչի՝ այս բոլորը կատարւում է նաեւ «Սիվիլիթաս»-ի շահերը պաշտպանելու համար: Հիմա ես իսկապէս չեմ հասկանում՝ մեր ո՞ր շահերն են պաշտպանուելու այսպիսի հետապնդմամբ», - ասաց հիմնադրամի տնօրէնը:*

*Հարցին, թէ ինչպէ՞ս է բացատրում այն հանգամանքը, որ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը, որի անդամն է «Սիվիլիթաս»-ի հիմնադիր Վարդան Օսկանեանը, մինչ օրս չի յայտարարել, որ իր անդամի՝ քաղաքական հետապնդման ենթարկուելու մասին, Ղազարեանը պատասխանեց. - «Ես բացատրութիւն չունեմ, այս մասին պէտք է պարոն Օսկանեանին եւ ԲՀԿ-ին հարցնենք, թէ իրենք ինչ ենթադրութիւններով են առաջ գնում: Ես կարող եմ խօսել միայն մեր մասին, որովհետեւ այնտեղ [հետապնդումը] եթէ քաղաքական չէ, բա ի՞նչ է, ուրիշ ի՞նչ կայ. ոչ մի բան չկայ, հարկային իր ստուգումները շարունակւում է, ԱԱԾ-ն իր քննարկումները շարունակւում է, ուրիշ ոչինչ չկայ»:*

### ՀԱԿ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ ԲՈՂՈՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ



Հայ ազգային կոնգրէսի երիտասարդ ակտիվիստները դատավարութեան ընթացքին

*«Հայ ազգային կոնգրէս» ընդդիմադիր դաշինքի երիտասարդ ակտիվիստներ՝ Տիգրան Առաքելեանի, Արտակ Կարապետեանի, Սարգիս Գէորգեանի եւ Դաւիթ Քիրամիջեանի պաշտպան Ստեփան Ոսկանեանը Օգոստոսի 20-ին բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան: Այս մասին «Փաստինֆօ» լրատուական գործակալութեան թղթակցին յայտնել է պաշտպան Ստեփան Ոսկանեանը:*

*Պաշտպանը տեղեկացրել է, որ վերաքննիչ բողոքում միջնորդել է բեկանել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի Յուլիսի 20-ի դատավճիռը եւ կայացնել արդարացման դատավճիռ:*

*Յիշեցնենք, որ դատարանը՝ դատաւոր Գագիկ Պօղոսեանի նախագահութեամբ ՀԱԿ երիտասարդների նկատմամբ կայացուած դատավճռով նրանց դատապարտել էր 6-ից 2 տարուայ ազատազրկման: Դատարանի դատավճռով Տիգրան Առաքելեանը մեղաւոր էր ճանաչուել իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ կեանքի կամ առողջութեան համար վտանգաւոր եւ ոչ վտանգաւոր բռնութիւն գործադրելու եւ խուլիգանութեան, իսկ Արտակ Կարապետեանը՝ իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ ոչ վտանգաւոր բռնութիւն գործադրելու եւ խուլիգանութեան մէջ, Սարգիս Գէորգեանն ու Դաւիթ Քիրամիջեանը՝ խուլիգանութեան մէջ:*

*Բոլոր 4 ամբաստանեալները մեղադրւում են 2011թ. Օգոստոսի 9-ին ոստիկանների հետ տեղի ունեցած միջադէպի գործով:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

### ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՒՆԵԱՆՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԷՆ ՆԵՐՍ

*Հայաստանի Ներքին գործերի նախկին նախարար Վանօ Սիրադեղեանի թիկնազօրի նախկին պետ Սուրէն Սիրունեան անցած շաբաթ օրը մահացել էր, հարազատների փոխանցմամբ՝ սրտի կաթուածից:*



Սուրէն Սիրունեան իր դուստր՝ Դիանայի եւ տիկնոջ հետ

*Սիրունեանի դուստրը՝ 16-ամեայ Դիանան, չդիմանալով հօր կորստին, բնակարանի 5-րդ յարկից իրեն ցած էր նետել:*

*Բժիշկները մի քանի օր պայքարում էին Դիանայի կեանքի համար: «Արմենիա» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի վարիչ Սուրիկ Մակարեանն «Ազատութիւն» ռադիօկայանին տուած հարցազրոյցում փոխանցեց, որ աղջկան իրենց մօտ տեղափոխել են ծայրայեղ ծանր վիճակում եւ այժմ բժիշկներն ամէն ինչ անում են նրա կեանքը փրկելու համար:*

*Դժբախտաբար, Դիանան եւս մահացաւ Օգոստոս 22-ի առաւօտեան:*

*Սուրէն Սիրունեանն այսպէս կոչուած՝ «7-ի գործով» 2008-ի մարտիմէկեան իրադարձութիւնների առնչութեամբ դատապարտուել էր 4 տարուայ ազատազրկման եւ 1 տարի կալանավայրում մնալուց յետոյ համաներմամբ ազատ էր արձակուել:*

*Վերջին շրջանում նա որեւէ քաղաքական ուժի չէր անդամակցում, սակայն «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան համակիր էր:*

### ԴԵՄԿՈՒՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԹԵԹԵՒՍՈԼԻԿՈՒԹԻՒՆ ՉԻ ԱՆԻ ՈՒ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

*Հայաստանի Դեմոկրատական կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը 2013 թուականին կայանալիք նախագահական ընտրութիւններում չի առաջադրի իր թեկնածութիւնը: Այս մասին Օգոստոս 21-ին նա յայտարարեց լրագրողների հետ հանդիպման ժամանակ, նկատելով՝ «Թեթեւսոլիկութիւն չանենք»:*



Հայաստանի Դեմոկրատական կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան

*Շարունակելով նախագահական ընտրութիւնների թեման՝ Արամ Սարգսեանը նշեց, որ այն կը տարբերուի միւս ընտրութիւններից միայն այն ժամանակ, երբ թեկնածուների միջեւ ստեղծուի իրական մրցակցութիւն: Միաժամանակ նա ընդգծեց, որ այս պահին ինքը ոչ մէկին չի համարում Սերժ Սարգսեանի իրական մրցակիցը:*

*«Եթէ այսօր իշխանութիւնը ցոյց տայ, թէ ի՞նչ փոփոխութիւններ է անում, ի՞նչ է արդէն սկսել անել ու դրա հետեւանքով ի՞նչ կը փոխուի երկրում, կարծում եմ, էլ ոչ մի հարց չի առաջանայ: Այդ ժամանակ, ինչո՞ւ չէ՝ ՀԴԿ-ն եւս կը սատարի գործող նախագահին: 20 տարուայ ընթացքում բոլոր հանրահաւաքային շարժումներով անցել ենք, բայց այս պահին չեմ տեսնում հնարաւորութիւն, որ այնպիսի մի ալիք բարձրանայ, որը ժողովրդին իրական օգուտ բերի:*

*Մարդիկ գալիս են հաւատալով ընդդիմութեանը, նաեւ մեզ, եւ արդիւնք չեն ստանում, ճամպրուկները հաւաքում ու մեկնում են երկրից»,- ասաց Դեմկուսի նախագահը:*

*Անդրադառնալով առաջիկայ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւններին, Արամ Սարգսեանը նշեց, որ դրանք կ՚ընթանան այնպէս, ինչպէս անցան խորհրդարանական ընտրութիւնները: Ըստ նրա՝ հասարակութիւնն անտարբեր է ՏԻՄ ընտրութիւնների նկատմամբ:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԵԿՆԱԾ ԵՒ ՉՎԵՐԱԴԱՐՁԱԾՆԵՐԻ ԹԻՒԸ ՇԱՐՈՒՆԱԿ ԱՃՈՒՄ Է

*«Հայկական ժամանակ» տեղեկացնում է, որ անցած եօթ ամիսներին բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով Հայաստանից մեկնել է եւ չի վերադարձել 83 հազ. 760 մարդ: Այս տուեալը հրապարակել է ՀՀ տարածքային կառավարման նախարարութեան միգրացիոն պետական ծառայութիւնը:*

*Անցած տարուայ նոյն ժամանակահատուածում բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով ՀՀ-ից մեկնած եւ չվերադարձածների թիւը կազմել էր 78 հազար 644 մարդ: Անցած տարուայ համեմատ մեկնած եւ չվերադարձածների ցուցանիշն աճել է 5 հազարով կամ մօտ 6.5 տոկոսով: Միայն Յուլիսին Հայաստանից մեկնել եւ չի վերադարձել շուրջ 10 հազար մարդ: Թերթը յիշեցնում է, որ միգրացիոն պետական ծառայութիւնը ՀՀ կառավարութեանն առաջարկել է արտագաղթի ճշգրիտ ծաւալները պարզելու նպատակով ուսումնասիրութիւն անցկացնել: Այդ ծրագրի համար միգրացիոն պետական ծառայութիւնը ՀՀ կառավարութիւնից խնդրել է լրացուցիչ 13 միլիոն դրամի ֆինանսաւորում:*

# ԼՈՒՐԵՐ

## «ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՒԻԱՈՒՂԻՆԵՐ»-Ը ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ՉՈՒԵՐԹՆԵՐԸ ԵՐԵՒԱՆ

*«Ազատութիւն» ռադիոկայանի հարցմանն ի պատասխան, ընկերութեան լոնդոնեան գրասենեակից փոխանցեցին, որ աւիաընկերութիւնը որոշել է 2012-ի Թուականի Հոկտեմբերից դադարեցնել իր ծառայութիւնները դէպի Երեւան՝ ցածր եկամտաբերութեան պատճառով:*

*Վերջին մի քանի տարի ընթացքում «Բրիտանական աւիաուղիներ»-ի ինքնաթիռները Հայաստան չեն եկել, փոխարէնը դէպի Երեւան էին Թռչում բրիտանական մէկ այլ՝ BMI ընկերութեան ինքնաթիռները: Վերջերս BMI-ը վաճառուեց «Բրիտանական աւիաուղիներին», որն էլ որոշեց, որ դէպի Երեւան չուերթերը եկամտաբեր չեն:*

*«Ամիստադ տուր» ընկերութեան տնօրէն Շուշաննա Ադամեանի կարծիքով, որոշման պատճառ կարող են լինել նաեւ օդանաւակայանում գործող բարձր վարձավճարները, մինչդեռ «Արմենիա միջազգային օդանաւակայաններ» ընկերութեան հանրային կապերի պատասխանատու Գեւորգ Աբրահամեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում վստահեցրեց, որ օդանաւակայանի վարձավճարները չեն կարող նման որոշման պատճառ լինել: Նա ասաց, որ ընկերութեան հետ բանակցութեան ժամանակ նման հարց չի բարձրացուել:*

*Տարածաշրջանում «Բրիտանական աւիաուղիները» իր ծառայութիւնները դադարեցնում է միայն Հայաստանում: Փոխարէնը դէպի Թբիլիսի եւ Պաքու չուերթները շարունակուելու են:*

*Կառավարութեանն առընթեր քաղաւիացիայի գլխաւոր վարչութեան օդային փոխադրումների կարգաւորման վարչութեան պետ Հրանդ Միրզոեանի խօսքով, այս որոշման պատճառը մեր երկիրը չէ:*

*«Մենք ամէն կերպ փորձեցինք ընկերութեանը պահել շուկայում, մինչդեռ պատճառը աւիաընկերութեան համար դէպի Երեւան չուերթների ոչ եկամտաբերութիւնն էր», - նշեց նա:*

## ԱՍԱԼԱ-Ի ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՅԱՅՏՆՈՒԵԼ Է ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

*Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ) յայտարարութիւնը, Սիրիահայութեան եւ տարածաշրջանի ժողովուրդների նկատմամբ Թուրքիայի ոտնձգութիւնների կապակցութեամբ, լայն արձագանք է գտել Թուրքական լրատուամիջոցներում:*

*Թուրքիայի բոլոր յայտնի լրատուամիջոցները օրուայ գլխաւոր լուրերի շարքում ներկայացրել են ԱՍԱԼԱ-ի տարածած յայտարարութիւնը: Որոշ լրատուամիջոցներ ամբողջութեամբ, իսկ որոշներն էլ՝ կիսատ են ներկայացրել յայտարարութեան տեքստը:*

*Լրատուամիջոցներում ԱՍԱԼԱ-ի յայտարարութեան տակ ընթերցողների հիմնական մեկնաբանութիւնը կապուած էր Թուրքիայի իշխանութիւնների սխալ արտաքին քաղաքականութեան հետ:*

*Ներկայացնում ենք «Միլլիէթի» ընթերցողներից մի քանիսի մեկնաբանութիւնները «Զրօ խնդիր հարեւանների հետ քաղաքականութեան հետեւանքով առանց խնդրի հարեւան չմնաց», «Օ, ինչ հրաշալի է, մեր Թշնամիներն օր-օրի աւելանում են», «Միայն ԱՍԱԼԱ-ն էր պակաս, նա էլ յայտնուեց»:*

*Նշենք, որ ԱՍԱԼԱ-ի տարածած յայտարարութեան մէջ նշել է. «Սիրիայի հայ համայնքի անվտանգութիւնն ու անդորրը սպառնացող Թուրքական որեւէ ռազմական արկածախնդրութիւն, ուղղակի կամ անուղղակի որեւէ ոտնձգութիւն հանդիպելու է մեր համարժէք հակազդեցութեանը»:*

## ՊՈԼՍԱՀԱՅԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՕԳՆԵԼ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ

*Պոլսահայերը պատրաստ են օգնել Սիրիայում ստեղծուած իրավիճակով պայմանաւորուած՝ դժուար կացութեան մէջ յայտնուած հայերին, տեղեկացնում է «Ակօս»-ը:*

*Չնայած հայկական Թաղամասերում բախումներ տեղի չեն ունեցել, սակայն իրավիճակն այստեղ լարուած է: Ըստ Թերթի, սիրիահայերը վտանգին դէմ հանդիման են եւ այս իրավիճակում Թուրքիայի հայ համայնքն անտարբեր մնալ չի կարող:*

*Պոլսոյ Հայոց պատրիարքարանի հոգեւոր խորհրդի առաջնորդ Թաթուլ Անուշեանը յայտարարել է, որ իրենք չեն պատրաստւում խուսափել սիրիահայերի հանդէպ իրենց ունեցած պարտականութիւններից:*

*Թուրքիայի հայկական եկեղեցիներում մատուցուած պատարագի ընթացքում հայերն աղօթել են Սիրիայում խաղաղութեան հաստատման համար:*

*«Ակօս»-ը զրուցել է Թուրքիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ եւ եզրակացրել, որ պոլսահայերը պատրաստ են օգնել Հալէպում, Դամասկոսում եւ Քեսաբում ապրող իրենց հարազատներին:*

*Սուրբ Յովհաննէս եկեղեցու հիմնադրամի ղեկավար Յարութիւն Շանլըն, օրինակ, նշել է, որ իրենք պարտաւոր են հնարաւոր ամէն ինչ անել:*

*«Ստամբուլում նրանց ընդունել կարող ենք, Կարող ենք անհրաժեշտ սննդով ապահովել: Սիրիահայ համայնքին օգնելը բոլորիս պարտքն է: Թուրքիայի հայերը Իրաքի պատերազմի ընթացքում էլ հայերին օգնութեան ձեռք էր մեկնել»,-ասել է նա:*

*Սուրբ Խաչ դպրեվանքի հիմնադրամի նախագահ Մուրադ Բերբերօղլուն նշել է, որ իրենք ցանկանում են, որ պատերազմն օր առաջ աւարտուի: «Այս ընթացքում աշխարհի բոլոր հայերը սիրիահայերին օգնութեան ձեռք են մեկնելու»,- ասել է նա:*

*Իսկ Բաքըրքյոյի Սուրբ Ծնունդ Աստուածածին եկեղեցու հիմնադրամի ղեկավար Մեսութ Օզդեմիրը նշել է, որ իրենց հնարաւորութիւնները սահմանափակ են եւ կառավարութեան ու պետութեան աջակցութեամբ կարող են հայերին տեղաւորել Ստամբուլում եւ բոլոր կարիքները հոգալ:*

## ԼՂՀ ԱՅՑԵԼՈՂ ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՀՈՍՔՆ ԱՃՈՒՄ Է



Արցախի պատմական պեղումներէն մէկը, որ կը գրաւէ օտար զբօսաշրջիկներու ուշադրութիւնը

*2012 Թուականի Օգոստոսի 21-ի դրութեամբ ԼՂՀ են այցելել 10 հազար 667 արտասահմանցի զբօսաշրջիկներ, այս մասին տեղեկացնում են ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայութիւնից, յաւելելով, Թէ նախարարութեան հիւպատոսական ծառայութեան տրամադրած տուեալների համաձայն, 2012Թ-ի Յուլիսին հանրապետութիւն են այցելել 3 հազար 723 մարդ (2011 Թ. Յուլիսի 2 հազ. 165 մարդու փոխարէն), իսկ Օգոստոսի 1-ից մինչեւ 21-ն ընկած ժամանակահատուածում՝ 3 հազ. 124 մարդ (2011Թ. Օգոստոսի 2 հազ. 870 մարդու փոխարէն):*

*2012 Թուականի առաջին կիսամեակում ԼՂՀ են այցելել 3 հազար 820 արտասահմանեան քաղաքացիներ, ինչը 874-ով կամ 29,6%-ով գերազանցում է 2011 Թուականի նոյն ժամանակաշրջանի ցուցանիշը: Եթէ 2011 Թուականին 10-հազարերորդ օտարերկրեայ այցելուն ԼՂՀ սահմանը հատել է Հոկտեմբերին, ապա ընթացիկ տարում՝ Օգոստոսի սկզբին:*

*ԼՂՀ ԱԳ նախարարութեան փոխանցմամբ, տարէցտարի աճում է Արցախ այցելող զբօսաշրջիկների հոսքը աշխարհի բոլոր մայրցամաքներից, չնայած Ադրբեջանի իշխանութիւնների կողմից ստեղծուող խոչընդոտներին:*

*«Պատահական չէ, որ երկրամասն աւելի ու աւելի յաճախ է ընգրկւում աշխարհի ամենագրաւիչ զբօսաշրջային վայրերի վարկանիշներում: Այստեղ օտարերկրացիներին հրապուրում են պատմական հինաւուրց յուշարձանները, ճոխ բնութիւնը, բնապահպանական առողջ միջավայրը, ինչպէս նաեւ բնակիչների բարեհացակամ եւ հիւրասէր վերաբերմունքը»,- ասուած է ԼՂՀ ԱԳՆ հաղորդագրութեան մէջ:*

## ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՈՒՄ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԵՐԵՔ ՏԵՍԱԿԷՏ ԿԱՅ

*Թուրքիայի իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնը կանգնած է փոփոխութիւնների շեմին, եւ Սեպտեմբերի 30-ին կայանալիք կուսակցութեան համագումարը կը լինի պատմական: Այս մասին Օգոստոսի 20-ին, լրագրողների հետ հանդիպմանն յայտարարեց ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող Վահրամ Տէր-Մաթեւոսեանը:*

*«Պատմական է, քանի որ կուսակցութիւնը Թուրքիայում որոշակի սահմանափակումներ է մտցրել, Թէ իշխող կուսակցութեան նախագահը քանի՞ անգամ կարող է ընտրուել նախագահ, իսկ անդամները՝ պատգամաւորներ: Այսինքն՝ կուսակցութեան կորիզը փոփոխութեան է ենթարկւում եւ նրանք, ովքեր երեք անգամ յաղթահարել են ընտրութիւնները, այժմ պէտք է փոփոխուեն, եւ այս հարցը լուրջ խնդիրներ է առաջացրել կուսակցութեան ներսում»,-ասաց նա:*

*Ըստ այդմ՝ կուսակցութեան նախագահ Ռ. Էրդողանը վերջին անգամ կարող է ընտրուել կուսակցութեան առաջնորդ, նաեւ եօթ տասնեակից աւել պատգամաւորներ չեն կարող մասնակցել 2015 Թ. խորհրդարանական ընտրութիւններին, այդ իսկ պատճառով էլ իրենց բողոքն են արտայայտում կուսակցութեան կանոնադրութեան դէմ:*

*Ըստ փորձագէտի, Էրդողանը նման քայլերով նպատակ ունի կուսակցութիւնը զերծ պահել ճաքումից եւ չկրկնել իր նախկինների փորձը: «Շատերը սպասում են, որ գալիք համագումարում Էրդողանը յայտարարութիւն կ՚անի իր քաղաքական ապագայի վերաբերեալ՝ ցանկանո՞ւմ է 2015 Թուականին առաջադրուել նախագահական ընտրութիւններում, Թէ ոչ»,- ասաց նա՝ յաւելելով, որ Էրդողանն ուզում է առաջադրուել նախագահի պաշտօնում, սակայն նոյն պաշտօնին կարող է նաեւ առաջադրուել Գիւլը եւ հարց է առաջանում, Թէ ո՞ւմ հետեւից պէտք է գնալ:*

*Ինչ վերաբերում է կուսակցութեան դիրքորոշմանը՝ կապուած հայ-Թուրքական յարաբերութիւնների հետ, Վահրամ Տէր-Մաթեւոսեանը առանձնացրեց տեսակէտների երեք խմբաւորում: Ըստ այդմ՝ ստատուս-քվոյի պահպանման կողմնակիցներ, ովքեր պնդում են, որ չվաւերացուած վիճակում արձանագրութիւնները գործում են Թուրքիայի օգտին, երկրորդ խումբը կարծում է, որ չվաւերացուած արձանագրութիւնները խարան են Թուրքիայի ճակատին ու պէտք է բացուի հայ-Թուրքական սահմանը, երրորդ խումբը հաւաքուած են Ահմեդ Դաւութօղլուի հայեցակարգի շուրջ՝ 2015 Թուականին ընդառաջ ծաւալել հանրային դիսկուրս:*

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՍԵԴՐԱԿ ԱՃԷՄԵԱՆԻ ՀԵՏ

# ՍԻՐԻԱՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ ԿԸ ԲԱՑՈՒԻ

Պարոն Աճէմեան, մի քանի օր առաջ հանդիպել էիք վարչապետի հետ: Ըստ կառավարութեան հաղորդագրութեան, քննարկել էք Սիրիայի հայ համայնքի խնդիրը:

*Այո, պարոն վարչապետի հետ քննարկեցինք Սիրիայում այս օրերին տիրող ողբերգական իրավիճակը, ինչպէս նաեւ այնտեղ բնակուող մեր հազարաւոր հայրենակիցների հարցը: Այս օրերին կարեւորագոյն հարց է, որ Հայաստանի կառավարութիւնն աջակցի այնտեղ բնակուող հազարաւոր հայերին, ինչն էլ մենք տեսնում ենք: Ցատկապէս գոհունակութեան է արժանի սիրիահայ հարիւրաւոր երեխաներին մեր երկրի կառավարութեան աջակցութեամբ Հայաստան տեղափոխելն ու ամառային ճամբարներում տեղաւորելը: Մենք այցելեցինք երեխաներին, տեսանք, որ թէ որքան ուրախ են նրանք հայրենի երկրում:*

Իսկ առաջիկայում Սիրիայում իրավիճակի բարդացման հետ կապուած այլ ծրագրեր կա՞ն:

*Հնչակեան կուսակցութիւնը, ինչպէս եւ յայտարարել էր, պատրաստ է ամէն հարցով աջակից լինել սիրիահայ գաղութի պահպանման հարցում: Մենք վարչապետ Սարգսեանի հետ խօսեցինք Հայաստանում մէկ դպրոց այստեղ ժամանակաւորապէս բնակուող սիրիահայ երեխաներին տրամադրելու հրատապ խնդրի մասին: Վերջինս անմիջապէս արձագանքեց մեր առաջարկին, եւ մենք սկսել ենք Սփիւռքի նախարարութեան հետ գործնական քննարկումներ ունենալ եւ որոշակի քայլեր արուած են, ու վստահ ենք, որ առաջիկայում նման դպրոցի հարց կը լուծուի: Այնտեղ սիրիահայ երեխաները կ'անցնեն նոյն այն ծրագիրը, որ անցնում են իրենց հայրենի դպրոցներում՝ Սիրիայի դասագրքերով, դասաժամերով: Խնդրի լուծման ամբողջ հովանաւորութիւնը մենք կը վերցնենք մեր վրայ՝ Կիլիկեան Բարեսիրական Միութեան խողովակով, որը Հալէպի Կիլիկյան յայտնի վարժարանն աւարտածների միութիւնն է: Այս երկու օրը կապի մէջ ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, որպէսզի դրամահաւաքի պէս մի բան ունենանք՝ սիրիահայ համայնքին աջակից լինելու համար: Վեհափառ Հայրապետը նոյնպէս խոստացել է հնարաւորինս բոլոր հարցերում աջակից լինել:*

Եթէ անդրադառնանք ներքին քաղաքական խնդիրներին: ՍԴՀԿ-ն ինչպէս է դիտարկում Հայաստանում տիրող իրավիճակը, եւ որ դաշտում է իրեն պատկերացնում:

*Այս խնդրի մասին մենք առիթ ունեցանք խօսելու նաեւ վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ: Անշուշտ, վերջին երեք տարիներին Հայաստանում կան բազմաթիւ դրական իրողութիւններ՝ կայ բացխօսութեան որոշակի մթնոլորտ, քաղաքացիական հասարակութիւն: Սակայն այս ամէնը ՍԴՀԿ-ի համար բաւարար չէ: Մենք կարծում ենք, որ դեռ բաւական մեծ մասշտաբներ է հասնում կոռուպցիան, օլիգարխների մենաշնորհն ու ամենաթողութիւնը, որն, ըստ մեզ, թիւ մէկ բացասական երեւոյթն է: Մենք սովոր ենք լաւին լաւ ասել, վատին էլ վատ: Դեռ բաւական երկար ճանապարհ կայ անցնելու՝ մեր բոլորիս երազած Հայաստանը տեսնելու համար: Աշխատելու դեռ հսկայական տեղ կայ, բացասական հսկայական երեւոյթներ, որ կարօտ են լուծման: Ինչ վերաբերում է ՍԴՀԿ-ի տեղին եւ դերին, առաջիկայում՝ Հոկտեմբերին, մենք Մայր Հայրենիքում մեծ շուքով կը նշենք մեր կուսակցութեան 125-ամեակը, որին հրաւիրուած կը լինեն Հայաստանի քաղաքական դաշտի գրեթէ բոլոր ներկայացուցիչները: Այնտեղ մենք հնարաւորութիւն կ'ունենանք հանգամանալից վերլուծել անցեալ տարիները, վերհանել մեր սխալները, ինչպէս նաեւ խօսել առաջիկայի ծրագրերի մասին, որոնք, այսպէս ասեմ, շատ-շատերի համար անակնկալ են լինելու:*

Կը մանրամասնեք ինչ անակնկալներ:

*Մինչեւ Հոկտեմբեր քիչ ժամանակ է մնացել, սպասենք մեր միջոցառմանը:*



Վերջերս ձեզ մեղադրեցին նրանում, որ դուք հանդիպել էք Հայաստանի վարչապետի հետ՝ ՍԴՀԿ ներքին խնդիրներն ու դատավարութեան հարցն յօգուտ ձեզ լուծելու համար:

*Այդ տիպի ցածր խօսակցութիւններ երբեք չէի ուզեր մեկնաբանել, սակայն քանի հարցրիք՝ ասեմ: ՍԴՀԿ ներքին հարց գոյութիւն չունի, մենք մեր բոլոր խնդիրները լուծել ենք: Հայաստանում կայ ՍԴՀԿ՝ Գէորգ Պերկուպերկեանի ղեկավարութեամբ: Առաջարկում եւ յորդորում եմ բոլոր լրատուամիջոցներին՝ հաշուի առնել այս փաստը, որը նաեւ ամրագրուած է Հայաստանի արդարադատութեան կողմից եւ փակելով այս էջը՝ անցնել առաջ:*

*Հարցազրոյցը*
***ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ***
*«Առաւօտ» օրաթերթ*

## ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ



*ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամները Հանճաւանի մէջ հանգստացող սուրիահայ պատանիներուն հետ*

*Շարունակուած էջ 1-էն*

*Մասնաւորապէս անդրադարձ եղաւ սուրիահայ երեխաներու կրթական հարցերուն: Որոշուեցաւ համատեղ ստեղծել աշխատանքային խումբ՝ կազմուած նաեւ սուրիահայերէ, որ պիտի զբաղի Հայաստանի մէջ գտնուող դպրոցահասակ սուրիահայ երեխաներու կրթութեան կազմակերպմամբ:*

*ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամները իրենց գոհունակութիւնը յայտնեցին Սփիւռքի նախարարութեան՝ սուրիահայերու խնդիրները լուծելու նպատակով ձեռնարկուած քայլերուն առնչութեամբ եւ պատրաստակամութիւն յայտնեցին՝ սատարելու նախարարութեան նախաձեռնութիւններուն:*

*Ընկերներ Աճէմեանն ու Գալթագճեանը այցելեցին նաեւ Հանքաւանի մէջ գտնուող սուրիահայ երեխաներու ճամբարները:*

*Յիշեցնենք, որ Հայաստանի կառավարութեան աջակցութեամբ Հանքաւանի մանկական ճամբարներ տեղափոխուած են Հալէպէն եւ Դամասկոսէն հարիւրաւոր հայ երեխաներ՝ պատերազմական գործողութիւններու թատերաբեմէն զիրենք հանելու նպատակով:*

*ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամները երեխաներու հետ զրոյցներու ընթացքին յոյս յայտնեցին, որ շուտով Սուրիոյ իրավիճակը կը հանդարտի եւ երեխաները կարելիութիւն կ'ունենան միանալու իրենց ընտանիքներուն:*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ

*Շարունակուած էջ 1-էն*

*«Ակլեա Կրեդիտ Ագրիկոլ» դրամատունը, որուն նկատմամբ իրանական կողմը հետաքրքրութիւններ կը ցուցաբերէ: Հակառակ անոր, հայկական կողմը հերքած էր նման հետաքրքրութիւն կամ կապեր ունենալը:*

*«Ռոյթըրզ»-ի յօդուածագիրը նաեւ ակնարկած է, որ Թուրքիան ժամանակին նոյն իրավիճակի մէջ էր, ինչ որ է ներկայիս Հայաստանը:*

*«2010-ին Թուրքիան ապահով էր Իրանի դրամատուներուն համար: Սակայն ամերիկեան ճնշումներու հետեւանքով ստիպուած եղաւ խզելու կապերը Թեհրանի հետ: Արեւմուտքի պնդմամբ՝ թրքական դրամատուները այժմ աւելի զգոյշ են իրանցի յաճախորդներու հետ աշխատելու ժամանակ»,- ըսուած է յօդուածի մէջ:*

*Յօդուածագիրը կը յիշեցնէ որ, ԱՄՆ-ի մտահոգութիւնները Հայաստանի եւ իրանական դրամատուներու պատժամիջոցներու վերաբերեալ, նոր չեն. այդ մասին տեղեկութիւններ եղած են նաեւ «Ուիքիլիքսի» հրապարակուած փաստաթուղթերուն մէջ:*

*Այս առնչութեամբ Հայաստանի Կեդրոնական Դրամատան հաղորդագրութեան մէջ կ'ըսուի.*

*«Հայաստանի Հանրապետութեան տարածքում գործող բոլոր բանկերը, գտնուելով Կեդրոնական բանկի վերահսկողութեան ներքոյ, գործում են Հայաստանի Հանրապետութեան օրէնքների, Կեդրոնական բանկի նորմատիւ եւ բանկերի ներքին իրաւական ակտերի շրջանակներում:*

*«Հայաստանի Հանրապետութեան կեդրոնական բանկն առաջին հերթին պարտադրում է բանկերին եւ այլ ֆինանսական կազմակերպութիւններին իրականացնել բոլոր գործարքների մանրամասն ուսումնասիրութիւն՝ թոյլ չտալու համար միջազգային հանրութեան կողմից ընդունելի չհամարուող գործառնութիւններում ներգրաւումը:*

*««Մելլաթ բանկ» ՓԲԸ-ն Հայաստանում գործում է դեռեւս 1996թ.-ից, բանկի յաճախորդները հիմնականում Իրան-Հայաստան առեւտրաշրջանառութեան մէջ ներգրաւուած փոքր եւ միջին ձեռնարկատէրեր են, զբօսաշրջիկներ, ուսանողներ: Բանկի գործառոյթները եւ ակտիւների մեծութիւնը վերջին 3-4 տարիների ընթացքում կտրուկ նուազել են (բանկի ակտիւները 2010թ.-ի Դեկտեմբերի 31-ից մինչեւ 2012թ.-ի Յուլիսի 1-ը ընկած ժամանակահատուածում նուազել են աւելի քան 2 անգամ՝ 88 մլն ԱՄՆ դոլարից կազմելով 40 մլն ԱՄՆ դոլար). բանկը չունի որեւէ թղթակցային հաշիւ ինչպէս եւրոպական եւ ամերիկեան բանկերի, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութիւնում գործող բանկերի հետ:*

*«Հայաստանի Հանրապետութիւնում գործող բանկերը, չունեն թղթակցային յարաբերութիւններ նաեւ Իրանում գրանցուած բանկերի կամ ֆինանսական կազմակերպութիւնների հետ:*

*«Հայաստանի Հանրապետութեան կենտրոնական բանկը շարունակելու է խստագոյնս հետեւել հայաստանեան բոլոր ֆինանսական կառոյցների եւ նրանց յաճախորդների վարքագծին եւ իրականացուող գործառոյթներին՝ Հայաստանի Հանրապետութեան ֆինանսական համակարգը զերծ պահելու համար կայունութեանը վտանգող ցանկացած երեւոյթներից»:*

# ՕԼԻԳԱՐԽԻԱՅԻՑ ԶԵՐԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՑ ՁԱԽ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ ՀՆԱՐԱՒՈՐ ՉԷ (ՄԱՍ 2)

*ԴՈԿՏ. ԱՐԱՄԱՅԻՍ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ*

*Յօդուածի առաջին մասում ասուեց թէ՝ «Հայաստանի քաղաքական կուսակցութիւնների բաշխումը «քաղաքական հարթութեան» վրայ՝ սխալ է: (Յիշեալ մասը տեսնել հետեւեալ համացանցակայքում - http://hetq.am/arm/opinion/16675/aranc-dzakh-gaxaparakhosutyun-unecox-kusakcutyunneri-hayastani-qaxaqakan-hamakargy-kayunacnel-hnaravor-che.html )*

*Այդ հարթութեան վրայ չի երեւում կուսակցութիւնների գաղափարախօսութիւնն ու տնտեսական պլատֆորմը: Քաղաքականապես կայացած ու զարգացած երկիրներում, կուսակցութիւնները բաժանւում են կենտրոնից (ցենտեր/center) աջ եւ կենտրոնից ձախ, ուղիղ գծի սանդղակի (scale) վրայ:*

*Մեկնաբանումները է՛լ աւելի պարզորոշ դարձնելու նպատակով, բերենք շուէտական քաղաքական կուսակցութիւնների աշխարհայեացքային, գաղափարական ու տնտեսական կողմնորոշումի բաշխման սանդղակը եւ կատարենք համապատասխան վերլուծութիւններ:*

*Նկար 3. Շուէտիայի Րիքսդագի (Ազգային Ժողովի/ Riksdag) վերջին ընտրութիւնների աղիւսակը՝ ըստ պատգամաւորների թուի:*

*Շուէտիայի կուսակցութիւնների տեղաբաշխումը կենտրոնից (աղիւսակում թիւ 4) աջ եւ կենտրոնից ձախ՝ քաղաքական սանդղակի վրայ, երկարամեայ քաղաքական ու սոցիալական անհաշտելի պայքարի արդիւնք է:*

*Շուէդիայի Սոցիալ Դեմոկրատ Բանուորական կուսակցութիւնը (ՍԴԲԿ) հիմնադրուել է 1889-ին, ի հակակշիռ երկրի աջ բուրժուական կուսակցութիւնների՝ առաջ քաշելով դասակարգային պայքարը, եւ պայքարը հարստահարողների դէմ: Աշխատաւորների իրաւունքների պաշտպանութեան գործը կազմակերպելու նպատակով, 1898-ին ՍԴԲԿ-ն դժուարին պայքարի միջոցով կեանքի է կոչել Շուէտիայի Աշխատաւորների Արհմիութիւնը (Swedish Trade Union Confederation / Landsorganisationen i Sverige/ LO): Սոցիալ Դեմոկրատ Բանուորական կուսակցութիւնը եւ Աշխատաւորների Արհմիութիւնը մէկ դարից աւելի է, որ թե՛ իշխանութեան, եւ թե՛ ընդդիմութեան պայմաններում, մշտապէս հանդէս են եկել որպես երկրի համակարգի յարաբերական կայունութիւնը ապահովող հակադիր ձախ այլընտրանք:*

*Սանդղակի վրա, կենտրոնից ձախ գտնուող կուսակցութիւնները ունեն գաղափարական ու տնտեսական յստակ ընկերվարական, ժողովրդավարական աշխարհայեացք: Ձախերը դէմ են մոնոպոլ- կապիտալիզմին, աշխատաւոր զանգուածների կեղեքմանն ու հարստահարմանը: Կոմունաների միջոցով, նրանք ուժեղացնում են պետական սեկտորին պատկանող արտադրամիջոցները , դարձնելով դրանք առաւել արդիւնաւէտ ու մրցունակ՝ սեփականատիրական սեկտորի նկատմամբ:*

*Շուէտիայի բնակչութեան բարձր կենսամակարդակը եւ, այսպես կոչուած, «շուէտական սոցիալիզմի մոդել»-ի հիմնաքարը դրել են սոցիալիստ ձախ ուժերը: Երկրի ձախ ուժերը ունենալով LO-ի նման հզօր արհմիութիւն, զսպաշապիկ են հագցնում աջ դրամատէրերի կուսակցութիւններին , թոյլ չտալով անհարկի սեփականացումներ եւ օլիգարխների առաջացումը: Երկրի առողջապահութեան, կրթական ու սոցիալական սիստեմի բարձր մակարդակը ապահովւում է ունեւորների ու բարձր եկամուտ ունեցողների բարձր եկամտահարկերի միջոցով:*

*Երկրի ռազմավարական նշանակութիւն ունեցող արտադրանքները, ներմուծումն ու արտահանումները պատկանում են պետական սեկտորին, եւ գտնւում են պետութեան անմիջական հսկողութեան տակ:*

*Աւելի հանգամանօրէն կարելի է խօսել «շուէտական սոցիալիզմի մոդել»-ի եւ ձախ ուժերի դերակատարութիւնների մասին, սակայն այս համառօտ մատնանշումներն էլ բաւարար տեղեկութիւն են տալիս, թե ինչպէս է կայունանում երկրի քաղաքական-տնտեսական սիստեմը՝ կախուած քաղաքական կուսակցութիւնների տնտեսական դոկտրինայից...*

*Վերադառնալով Հայաստանի քաղաքական պատկերին ու կրկին անգամ դիտարկելով երկրի քաղաքական կուսակցութիւնների բնոյթն ու տեղաբաշխման սանդղակը (մաս 1,նկար 1), պարզ է դառնում՝ Հայաստանում տիրող քաղաքական ու տնտեսական համակարգի անկառավարելիութեան հիմնական պատճառը:*

*Հայաստանի առկայ քաղաքականութեան մեջ ամենաշահարկուած հասկացողութիւնը «ընդդիմութիւն» հասկացողութիւնն է: Կուսակցութիւնը կոալիցիայի մեջ մտնելով՝ դառնում է իշխանամէտ, իսկ կոալիցիայից դուրս*

| | | |
|---|---|---|
| 1 | • The Left Party<br>• Ձախ կուսակցութիւն | 19 |
| 2 | • Socialdemokraterna<br>• Սոցիալ Դեմոկրատ Բանուորական կուսակցութիւն | 112 |
| 3 | • Miljöpartiet<br>• Բնապահպանների կուսակցութիւն (Կանաչներ) | 25 |
| 4 | • Centerpartiet<br>• Ցենտրիստական կուսակցութիւն | 23 |
| 5 | • Folkpartiet<br>• Ժողովրդական կուսակցութիւն | 24 |
| 6 | • Kristdemokraterna<br>• Քրիստոնեայ Դեմոկրատ կուսակցութիւն | 19 |
| 7 | • Moderaterna<br>• Պահպանողական կուսակցութիւն | 107 |
| 8 | • Sverigedemokraterna<br>• Շուէդիայի Դեմոկրատների կուսակցութիւն (ծայրահեղ աջեր) | 19 |




*գալով՝ դառնում է «ընդդիմադիր»: Ընդդիմութեան այսպիսի մեկնաբանումը բացարձակ սխալ է: ՀՅԴ-ն, ԲՀԿ-ն ինչպէ՞ս կարող են ընդդիմութիւն դառնալ, երբ ՀՀԿ-ի ու այլ բուրժուական կուսակցութիւնների հետ գտնւում են սանդղակի աջ կողմում եւ ունեն նոյն տնտեսական ու համակարգային դոկտրինան: ՀԱԿ-ի «պայքար, պայքար, մինչեւ վերջ»-ը եւ ՀՀԿ -ի «առաջ Հայաստան» կոչերը նոյն երկաթուղու երկու զուգահեռ ընթացող ռելսերն են: Այստեղ բախում ու գաղափարական ընդդիմութիւն լինել չի կարող:*

*Ընդդիմութիւն կարող է լինել կենտրոնից աջ եւ կենտրոնից ձախ՝ տարբեր տնտեսական ու գաղափարախօսական աշխարհայեացք ունեցող կուսակցութիւնների միջեւ, ձախ սոցիալիստների ու աջ լիբերալ պահպանողականների միջեւ: Այս վերջին պնդումը կարելի է տեսնել տնտեսապէս զարգացած եւրոպական երկիրների քաղաքական կեանքում:*

*Հիմնուելով այս փաստերի վրայ, դժուար չէ տեսնել թէ Հայաստանի քաղաքական կուսակցութիւնների տեղաբաշխման սանդղակի ձախ կողմը թափուր է, ուստի ընդդիմութիւն հասկացողութիւնը, ինքնըստինքեան, վերանում է:*

*Հայաստանի քաղաքական ու տնտեսական առողջացումը կը սկսի այն ժամանակ, երբ աշխատաւորների դասակարգը կ'ուժեղացնի ու կը ստեղծի՝ իր շահերը պաշտպանող կուսակցութիւններն ու արհմիութիւնները, եւ կը զբաղեցնի սանդղակի ձախ կողմը՝ կատարելու համար իր պատմական առաքելութիւնը:*



## ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ՏՆՋՐԻ ԾԱՌԸ 2000 ՏԱՐԵԿԱՆ Է



Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտէն 37 քմ հեռաւորութեան վրայ Մարտունի վարչական շրջանի մէջ գտնուող Տնջրի ծառը (ծառատեսակը Ջինարի) 2000 տարեկան է, որ տեղացիներու պնդմամբ նախկին Խորհրդային Միութեան երկիրներու մէջ ամենատարեցն է:

Ծառը ունի 54 մեթր բարձրութիւն, իսկ բունի շրջնագիծը 27 մեթր է: Ծառի փչակի մակերեսը 44 քմ է, իսկ սաղարթները 1400 քմ տարածքով կը զովացնեն:

Ծառի փչակի մէջ մարդիկ գրութիւններ կը կատարեն: Թէեւ մոմ վառելը արգիլուած է, սակայն այցելուները մոմ կը վառեն ծառի փչակի մէջ, այդ մէկը կը վտանգէ ծառի գոյութեան:

## ՄԶԿԻԹԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ ԿԱՐՍԻ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՌՆԵՐԸ ՄԻԱՅՆ ՆԱՄԱԶԻ ԺԱՄԵՐՈՒՆ ԿԸ ԲԱՑՈՒԻՆ



Կարսի ամրոցի մօտակայքը գտնուող Սուրբ Առաքելոց եկեղեցին վերածուած է մզկիթի, սակայն բաց է միայն նամազի ժամերուն, որ կը զայրացնէ տեղացիներն ու օտար զբօսաշրջիկները: Այս մասին կը տեղեկացնէ Sondakika կայքը:

«Կարս եկող տեղացի եւ օտար զբօսաշրջիկները առաջին անգամ կ'այցելեն Կարսի ամրոց, սակայն չեն կրնար եկեղեցի-մզկիթ այցելել, քանի որ անոր դռները փակ կ'ըլլան»,- գրած է լրատուամիջոցը:

932-937-ին Աբաս Բագրատունի արքային կողմէ կառուցուած եկեղեցին 1994-ին անուանափոխուած է եւ վերածուած մզկիթի: Այցելուները, սակայն, կը պահանջեն զայն միշտ բաց պահել:

Կարսի եկեղեցին մտնել չկրցող զբօսաշրջիկները անմիջապէս կը մեկնին Անիի աւերակները տեսնելու:

**www.massisweekly.com**

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

*Շարունակուածէջ 1-էն*

* Հայ Ամերիկեան Խորհուրդը
* Միացեալ Հայկական Հիմնադրամը
* Հայ Դատի Յանձնախումբը (ԱՄՆի Արեւմտեան շրջան)
* Ամերիկայի Հայ Իրաւանց Խորհուրդը
* Ամերիկայի Հայկական Համագումարը
* Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Հիմնարկութիւնը
* Ամերիկայի Հայ Իրաւաբաններու Միութիւնը:

Յանձնախումբը պիտի համադրէ նաեւ շրջանի մարմիններու գործունէութիւնը, խրախուսէ անոնց նախաձեռնութիւնները, ինչպէս նաեւ պիտի գործակցի Հայոց Ցեղասպանութեան 100ամեակի Ոգեկոչման ձեռնարկները համակարգող պետական մարմինին եւ Սփիւռքի նոյնանման կառոյցներու հետ:

## ՕԳՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՔ ԵՐԿԱՐԵՆՔ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ

*Շարունակուածէջ 1-էն*

արդէն նախաձեռնած են գաղութի կարիքներուն հասնելու ծրագրուած ու համադրուած հաւաքական աշխատանքին:

Ի տես ստեղծուած վիճակին, հայութիւնը չի կրնար անտարբեր մնալ, այլ կը մղուի գործի, կանգնելու համար Սուրիոյ հայութեան կողքին, պատրաստ է օգնութեան ձեռք երկարելու անոր:

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի հայութիւնը եւս մտահոգ է սուրիահայ տագնապով: Հայութեան աշխարհատարած ընտանիքին ոեւէ մէկ անդամին հասած վնաս՝ հաւասարապէս կը ցաւցնէ ընտանիքին բոլոր անդամները՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Հայավայել գիտակցութեամբ պատրաստակամ ըլլանք մեր կարողութեան սահմաններուն մէջ աջակցելու մեր հայրենակիցներուն, ինչպէս որ օժանդակութեան ձեռք երկարած ենք Հայաստանին, Արցախին, Լիբանանի, Իրաքի եւ այլ տագնապահար գաղութներու:

Արդ, կոչ կ'ուղղենք շրջանիս հայութեան, որպէսզի ընդառաջէ Սուրիոյ հայութեան կարիքներուն եւ նուիրաբերէ ի խնդիր Սուրիոյ հայկական օճախին բարօրութեան պահպանման: Սուրիոյ Հայ գաղութը իր դարաւոր առաքելութիւնը կենսագործած է բարձրաճակատ, այսօր ալ կառչած կը մնայ իր օճախին, իրազեկ է, որ գաղթաշխարհի տարածքին ունի իր անփոխարինելի եւ անկորնչելի տեղն ու դերը, զոր պէտք է պահպանել միահամուռ կեցուածքով:

Այսու կը հաղորդենք մեր ազնիւ ժողովուրդին, որ կազմուած է «Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմին» մը:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆ, ՎԵՐ. ՅՈՎՍԷՓ ՄԱԹՈՍԵԱՆ, Ս.Դ.Հ.Կ., Հ.Յ.Դ., ՌԱԿ, Հ.Բ.Ը.Մ, ՀՕՄ, ԱՄԵՐԻԿ. ՀԱՅ ԱՒԵՏ. ԸՆԿ.



# ՔՐԷՍԷՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԱՒԱԿԱՏԻՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

### (ԼԱ ԳԱՆԻԱՏԱ, ՔՐԷՍԷՆԹԱ ԵՒ ԹԱՀԱՆԿԱ ԾՈՒԽԻ)



Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան, Թեմի հոգեւորականներու մասնակցութեամբ, Շաբաթ, Օգոստոս 11ի երեկոյեան ժամը 7:30ին Նաւակատիքի Արարողութիւնը կատարեց Թահանկայի մէջ գտնուող Հայց. Առաքելական Նոր Եկեղեցւոյ, որուն հասցէն է.- 10154 Mountair Avenue, Tujunga, CA 91042

Արարողութեան մասնակցեցան Թեմի նախորդ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Հարաւային Գալիֆորնիայի Առաջնորդական փոխանորդ՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան, Ծուխի նոր Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան եւ Սարկաւագները:

Չէ, այս միւսը, այստեղ էլ լրիւ ընտանեկան վիճակ է: Աւելի լաւ է վերջին լուսանկարների մէջ փնտռեմ: Ահա սա՝ Սեւակի եւ Լիլիթի հետ, միւսը՝ Վարդգեսիկի, թեպէտ արդէն Վարդգէս է, աչքերից կայծեր են թռչում: Ձեռքը դրել է ճակատին, ճիշտ քո ժեստով, թեպէտ քեզ երբէք չի տեսել.... Զարմանալի բան. այդ նկարը դրել եմ քեզ նուիրուած գրքում՝ «Յետմահու անմահութիւն»: Որ կարդայիր, գանգուր մազերդ բիզ-բիզ կը կանգնէին: Լաւ է, որ չես կարդայ, երբէք:

Չշեղուենք.... Այստեղ թոռնուհիներիդ հետ եմ, Եւայի եւ Դանիելա-Աննայի: Այո, մոդայից ետ չենք մնում: Այս մէկն էլ ամենափոքր թոռդ է՝ Լիլիթի որդին՝ Էրիկ-Տիգրանը: Լայն, հսկայական ճակատով, խոշոր խատուտիկ աչիկներով, վուշ գանգուրներով. իսկական Քալիֆորնիայի պտուղ է: Եւան՝ Սեւակի դուստրը, որոշել է գրող դառնալ, պապիկի նման, եթէ ստացուի: Պատմել ենք, որ դու իր նման լաւ նկարում էիր, լաւ երգում էիր, իր՝ Եւայի նման: Ոչինչ, նաեւ լաւ գրքեր էիր գրում: Դեհ սեւակն գեղեցկուհի թոռնուհիդ որոշել է, քանի որ դու իրեն այդքան նման սովորութիւններ ու տաղանդներ ես ունեցել, ինքն էլ կը փորձի քեզ նմանուել շատ լաւ գրքեր գրելով: Սակայն՝ չգիտի հայերէն, թէ աւելի լաւ է անգլերէն լեզուով: Դէ գիտես, աւելի լայն ընթերցող կ՚ունենայ, աւելի շատ փող: Տրամաբանական է, սթափ սերունդ է աճում:

Ինձ համար որեւէ յարմար լուսանկար չեմ գտնում: Դէ լաւ, հեռախօսիս մէջ մի քանիսը կան: Եւան է սիրում ինձ նկարել: Ահա այս մէկը: Գտայ: Իմ ու քո լուսանկարները ուղարկում եմ լրագրող մայրիկին:

Հիմա ամէն ինչ դիւրին է: Պատշգամբում սուրճ խմելով կարող ես լուսանկար ուղարկել խօսակցիդ, յօդուած, թէ խմբագրութիւն, թէ TV ընկերութիւն, Քալիֆորնիա, Հայաստան, ուր ուզես: Աշխարհը բաց է ու այնքան փոքր ու փխրուն ու ......խոցելի: Ազահութեան, անհաւատութեան, չարիքի դիմաց հողմահար է մեր հրաշք մոլորակն այսօր: Որքան կը դիմանայ արդեօք....

Ի՞նչու որոշեցի գրել այս ամէնը: Ասեմ: Երբ իմ ու քո լուսանկարները ուղարկում էի լրագրողին, ակամայ անդրադարձայ, որ այս լուսանկարում ես քեզանից մեծ եմ: Այո, այո, ես քեզանից մեծ եմ այսօր, ինքդ կը համոզուէիր, եթէ մի հրաշքով տեսնէիր մեր լուսանկարները «դիմա՞ց-դիմա՞ց ...» ինտերնետ թերթի փոքրիկ ճառագող լուսաւոր էջին:

Հանդարտուիր սիրելի յոբելեար: Ծնունդդ շնորհաւոր:






## ՍԱՅԱԹ ՆՈՎԱ
### ԱԼԲԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ

Ռանչպարների սեղաններից
Մինչեւ դռները մէջլիսի
Արդեօք եղե՞լ է, որ մարդիկ
Ուրախութեան բաժակն իրենց
Չեն լցրել քո «սոյբաթների»
Արեւներով շողշողուն,
Կախեթի հին կարմիր գինին
«Կիռզալներիդ» սափորներից:

Կամ թէ ո՞ր մէկ սիրահարի
Շրթունքներին դեռ չի դիպել
«Ղալամներիդ» գրով օծուած
«Ոսկէ փնջանն» զգլխիչ:

Յէգ սոխակին վարդը «էրեց»,
Մեծ խայամին՝ կինն ու գինին
Իսկ սրտերը մեր բոլորի
Շող արեգակն «բրոյի-բրոյի»,
Աշուղի «բաս» քո քեամանչան:

Եւ Մայիսներ գարունների,
Զուգուած իրենց նոր շորերով,
Ամենուրէք երգել են միշտ
«Դուն էն գլխէն իմաստունիս»
Ու քո Սայաթ Նովու անուան
Նուիրեցին շքեղագոյն
«Վարդի տօնը» իրենց գարնան
Գեղածիծաղ Վրաստանի
«Կիռզալներով, վա՜յ նազանիմ»:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Ստորեւ կը հրատարակենք Լոս Անճելոսի Լիբանանի աւագ հիւպատոս Ճոնի Իպրահիմի հետեւեալ շրջաբերականը, Լիբանանի յառաջիկայ Երեսփոխանական ընտրութեանց վերաբերեալ:

2013 Թուականին Լիբանանի մէջ կայանալիք Երեսփոխանական ընտրութեանց որպէս նախապատրաստութիւն Լոս Անճելոսի Լիբանանի աւագ հիւպատոսութիւնը՝ այս շրջանի բոլոր լիբանանցիներուն կը յիշեցնէ որ իրենց անունները պէտք է արձանագրել տան 2013 Թուականի երեսփոխանական ընտրութիւններու ընտրացուցակին մէջ: Այս մէկը պէտք է կատարուի Դեկտեմբեր 31, 2012-էն առաջ, անձամբ ներկայանալով հիւպատոսարանի գրասենեակը ստորագրութեան համար եւ կամ թղթատարով առաքել ամերիկեան նոտարի մօտ ստորագրելէ ետք, որուն պէտք է ընկերակցի անցագիրի կամ անձնաթուղթի պատճէնը: Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է կապ հաստատել ելեկտրոնային հասցէով www.lebanonconsulatela.org կամ հեռաձայնել ընդհանուր հիւպատոսութեան գրասենեակը հետեւեալ հեռախօսահամարին 213-243-0999:

# ՅԻՇՈՒՄ ԵՄ ՆՐԱ ԲԱՐԵՀՈԳԻ ԴԷՄՔԸ

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

Առաւօտեան կողմերը դեռ կէսօր չեղած մէկը փողոցից կանչում էր.

-Ռուբէ՞ն, դուռը բաց:

Ցանցաւոր դարպասի մօտ կանչողը մեր ընկեր Էդուարդն էր, արագ քայլքով մօտեցայ , ժպտերես դիմաւորեցի նրան ասելով.

-Այ ընկեր Ջան, դու հրաւէրի կարիք չունես, դուռը բացէիր եւ ներս մտնէիր:

Իրեն առաջնորդեցի դէպի բակ Թխկենու շուքի տակ զով տեղը նստելու:

Թեհրանի իմ ընկերներից է նա, արդէն իսկ ընտանիքով ապրում են նոյն քաղաքում՝ Սանլանդ: Մենք մօտաւորապէս համատարիքներ ենք՝ հին ընկերներ:

-Հը, Էդուա՛րդ, առողջութիւնդ ոնց է:

-Դե՛հ, ասենք՝ լաւ ենք, որ լաւ ըլլնենք:

-Էս ինչ լաւ Հայաստանեան ոճով ես խօսում:

Էդուարդը անակնկալի եկած յարեց:

-Միթէ՞ վատ է:

-Ոչ թէ վատ է, այլ՝ շատ էլ լաւ է, Հայաստանով ենք ապրած:

-Հայաստանցիների հետ մեր շփումն ու յարաբերութիւնը դրականօրէն մեր խօսակցական լեզուի վրայ ազդում է, Հայաստանեան համ ու հոտ ենք ստանում:

-Գոնէ այս տեսակէտից լաւ է եղել, սակայն այն որ Հայաստանը լքել եւ արտագաղթել են, թէ՛ հայրենիքին են աղքատացրել եւ թէ՛ իրենց:

Էդուարդը նստած դիրքից շտկուելով դպրոցական աշակերտի պէս ուրախացած՝ որ նոր բան է սովորել, հայեացքը դէպի ինձ վրայ բերեց՝

-Իմաստուն խօսք ասացիր, գոնէ ինձ համար նորութիւն էր:

-Չեմ կարծում այնքան էլ նոր լինի, հին խօսք է արտագաղթի հետ առնչւող:

-Յուսով այնպիսի առիթ ստեղծուի, որ նրանք վերադառնան իրենց հայրական օջախները, շատ-շատերը կարօտով դժուար կեանք են անցկացնում, թող արտագաղթը ի սպառ կանգ առնի, քանի որ թէ՛ հայրենիքն է տկարանում եւ թէ՛ սերունդները այլասերւում են:

-Ոչ թէ միայն նրանք գնան, այլ՝ բոլոր հայերը:

-Ճիշտ ես ասում Ռուբէն՝ - բոլորը, քանի որ Սփիւռքը հայ մնալու տեսակէտից անապահով է դառնում՝ սերունդները օտարանում են, ովկիանոսում թափւող գետի պէս լուծւում:

Ժամանակին Միջին Արեւելքի հայ գաղութներով հպարտանում էինք, որտեղ հայութիւնը պահպանում էր իր ինքնութիւնը, սակայն գերմեծերի սարքած սադրանքների ու կռիւների հետեւանքով երկրները անապահովանում են, գոյապրուստի դժուարութիւններ են առաջանում, արտագաղթողները փրկութեան ելք են նկատում դէպի արեւմտեան երկրներ՝ փոխանակ ուղղուեն դէպի պապենական երկիրը, նրանք խաբուսիկ երազներով են տարւում, շուտ թէ ուշ կորցնելու են իրենց իսկութիւնը:

-Սիրելի Էդուարդ այս նիւթի մասին շատ է գրուել ու ասուել, ծեծուել ու ծամծմուել, ուր է լսող ականջը, հայրենի կառավարութիւնը պէտք է մտածի եւ հայահաւաք կազմակերպի: Թողնենք այս հարցը մի ուրիշ առիթով, ասա՛, տեսնե՛մ, ի՞նչ նորութիւն ունես:

Մեր ընկերը լաւ տեղաւորուելով բազկաթոռի մէջ հանգիստ ու խաղաղ ձայնով ասաց.

-Ինչ ասեմ ախպեր Ջան, նորութիւններ շատ կան, մեր այստեղ գտնուելը ինքնին նորութիւն է, որն ասեմ, որը խոստովանեմ, լաւ է հենց մեր անձնական կեանքից ասենք, վերջերս ինձ պատահածը պատմեմ:

-Ինչ է պատահել, որ նորութեան հաշուին ես դնում:

-Այս մեր Լոս Անջելէս քաղաքի միլիցիաները որքան խիստ եւ անզիջող են, երբ նկատում են խախտում երիտասարդ ու տարեց չեն տարբերում, բոլորին միանշանակ մէկ աչքով հաւասար են տուգանում:

-Բա էդպէս պիտի լինի, օրէնքի դիմաց բոլորը հաւասար են, չի կարելի խտրականութիւն եւ կողմնապաշտութիւն, որքան վճռակամ կեցուածք օրէնքի նկատմամբ, այդքան ապահովութեան երաշխիք քաղաքացիների համար:

-Օրինախախտ վարիչին պահում են մեքենայի մէջ ղեկին գամուած, մինչեւ մեղսագիրը( Ticket) յանձնելիս, քեզ է մնում, եթէ անհամապատասխան վճիռ ես նկատում, դատարան ես դիմում, եթէ ոչ, ստիպուած պիտի խնայողութեամբ տնտեսած գումարդ տաս, սա անշուշտ իմ եւ քո թոշակառուների խնդիրն է:

-Գիտես որ մենք հասակաւորներս երիտասարդների նման ուշք ու միտք չունենք, երբեմն անուշադիր խախտումներ ենք թոյլ տալիս, երիտասարդների նկատմամբ խստութիւնը կարիք է նրանց օրէնքներին վարժեցնելու համար:

Երկրի օրէնքների գործադրումը պարտադիր է բոլորի համար, որն նախ սկսում է պետական պաշտօնեայից, օրէնքի նկատմամբ անտարբերութիւնը եւ չարաշահումը աղէտալի հետեւանքներ կունենայ:

-Երիտասարդ ու տարեց մէկ են օրէնքի դիմաց, խստութիւնների հետեւանքով է այս կանոնաւոր երթեւեկութիւնը, մանաւանդ այս երկրում որ խայտաբղէտ ժողովուրդներ են ապրում տարբեր մշակոյթներով եւ մտայնութիւններով: Յիշում ես մեր Թեհրանի երթեւեկութիւնը, խօսքս իմ այնտեղ եղած ժամանակի մասին է, թէ ինչ խառնիճաղանչութիւն էր տիրում, քանի որ խստութիւնը պակսում էր օրէնքի գործադրման առումով:

-Հա՛, յիշում եմ, բայց միլիցիաների վերաբերմունքը անուրանալի է, խախտումի դէպքում դու էիր գնում միլիցիայի մօտ, ամէն ինչ կատարւում էր մտերմաբար եւ երկխօսութեամբ, տուգանքն էլ այնքան բարձր չէր, չունենալու դէպքում խնդրելով գեղչ էր տրւում, անտրտունջ գնում եւ գումարը վճարում էիր , շատ աֆիցերներ հայերի հետ յատուկ յարգանքով եւ երբեմն էլ ներելով ճամբայ էին դնում:

-Ներումի մասին ասացիր, այդ մէկը հենց ինձ պատահեց, որն իմ մէջ արթնացրեց վաղեմի մի յուշ, երբեք չմոռացւող: Դեռ Ամերիկա չէի եկել, մօրաքոյրս ամուսնու հետ Ամերիկայից Թեհրան էին եկել այցելութեան, ի պատիւ նրանց կազմակերպեցի պտոյտ:

-Ե՞րբ եւ ի՞նչ եղանակ էր դա:

-Ամառ էր, Օգոստոս ամսուայ կիզիչ օրերին, այդ ժամանակ Թեհրանում երկնքից կրակ է թափւում, հեղձուձիչ օդը նեղում է ժողովրդին:

-Դէպի ո՞ւր գնացիք:

-Դէպի Փուլուր, քեզ համար հօ ծանօթ է:

-Ինչպէս թէ ծանօթ չի:

-Թեհրանից մի ժամ ու կէս հեռաւորութեան վրայ է գտնւում, զովասուն գիւղաքաղաք, ճամբի եզրին բարձր լեռան ծայրից գլորւող ջրվէժը, որը գոյանում էր ձնհալից, որքա՜ն հետաքրքիր, պարզ եւ սառնորակ ջուր, ճամբից երթեւեկողները կանգնում էին, թարմանում եւ ջրամանները լցնելով ճամբայ ընկնում, որը դէպի Թեհրան, որն էլ դէպի Կասպից ծով կամ այլուր:

Մեր ընկերը խօսքիս մէջ ընկնելով ասաց.

-Առ ի տեղեկութիւն ասեմ որ, այդ ջրվէժը չկայ այլեւս, այդ հոյակապ բնութեան պարգեւը, գեղեցկութիւնը, շահադիտական նպատակներով նրա յորդ ջուրը թեքել են դէպի մի գործարան, ուր լցւում է սրուակները եւ որպէս հանքային ջուր վաճառւում:

-Իմ Թեհրան ճամբորդած ժամանակ 2010-ին տեսայ նրա չորացած հունը, ափսոսացի եւ տխրեցի այդ հակաբնապահպանական արարքի համար: Լա՛ւ, թողնենք դա, այդ պտոյտին նաեւ մեզ հետ էր ողորմած հոգի մայրս, փէյքան մագնիշով նոր ինքնաշարժը երկու օր էր որ գնել էի, դեռ իրաւունք չունէի Թեհրան քաղաքից դուրս քշելու մինչեւ համարակալումը, սակայն ուշադրութիւն չդարձրի եւ վարեցի: Կէսօրուայ մօտերն էր, ուրախ էինք մի քանի ժամերով քաղաքից հեռու վայելելու ենք հաճելի օդը: Մեքենան վարում էի արագ անզգոյշ երթեւեկութեան կանոններին, յանկարծ ճամբին միլիցիան Աբը Ալիի էն բարձունքի վրայ ինձ կանգնեցրեց: Գնացի մօտը, նա երիտասարդ սպայ (աֆիցեր) էր, երեք յանցանքներ թուեց եւ սակն էլ ասեց՝ 15 հազար թուման, բացատրելով իրեն որ Ամերիկայից հիւր ունեմ հետս, նա վկայականիցս նկատելով որ հայ եմ ասաց. -քանի որ հայ ես եւ հայերին յատկապէս յարգում եմ, քեզ ներում եմ, բարի ճանապարհ, սակայն ճանապարհին զգոյշ քշիր:

-Ի՜նչ բարեսիրտ եւ մարդասէր միլիցիա:

-Քանի տարինե՞ր են անցնում այդ դէպքից, երբ խօսւում է այդ մասին, նրա երիտասարդ դէմքն է հայեացքիս առջեւը պարզւում, թող ուր որ կայ, առողջ եւ երջանիկ լինի, յիշում եմ նրա բարեհոգի դէմքը, ներման խօսքերը, իսկապէս մոռացուելու բան չէ, ազնուութիւնը եւ բարիքը միթէ՞ մոռացուելիք են Էդուա՛րդ, կեանքի քաղցրութիւնն են՝ ուրախութիւնը, այսպիսի վերաբերմունքներն են, որ մարդս մարդու են կապում, ջերմութիւն եւ սրտցաւութիւն են առաջացնում իրար հանդէպ: Հայաստանում էլ է ինձ պատահել, միլիցիան սփիւռքահայ լինելուս համար ներեց եւ հրաւիրեց զգոյշ լինել: Լա՛ւ, դու ինչո՞ւ այս նիւթը առաջ քաշեցիր, չլինի տուգանուել ես:

-Հենց էդպէս է:

-Ինչ յանցանքի համար:

-Արագութեան, որը անակնկալօրէն պատահեց, զառիթափին մեքենան ինքնաբերաբար արագացաւ, մի ասի, էդ կողմերում միլիցիան թագնուած նկատել է ինձ, մինչեւ իմ գլխի ընկնելը տեսայ միլիցիան ահազանգը հնչեցրած հետեւում է ինձ ազդարարելով մի յարմար տեղում կանգնել, կանգ առայ եւ ղեկին կպած սպասեցի, նա մօտեցաւ, պահանջեց վկայականս, կապոյտ աչքերից ու շագանակագոյն մազերից հասկացայ որ ամերիկացի է, էս անգլերէնն էլ հօ լաւ չեմ իմանում, որ իրեն բացատրէի: Նա արագ բլբլացրեց, մենակ մի բանը հասկացայ, որ ասաց՝- Արագ ես քշել, ինձ թողեց նստած վիճակում, մի տաս րոպէից երեւաց tiket յանձնելով ինձ: Այսպէս տրամադրութիւնս ընկած գնացի ժամադրութեանս:

-Ա՛խր քեզ գալիս է՝ երիտասարդական հովեր վերցնես արագ քշելով:

-Հաւատայ, կամովին չէր, ակնթարթային եւ անիմանալիօրէն էր, որին անդրադառնալով անմիջապէս դանդաղեցրի:

-Էս երբ է պատահել:

-Մի քանի ամիսներ առաջ:

-Ինչպէս ինձ հիմա ես ասում:

-Ախր ինչ ասէի, որ տուգանուել ե՞մ:

-Ինձ ասելով թերեւս կարողանայի մի բանով օգտակար լինել, Ի՞նչ ես արել գումարը, վճարել ե՞ս:

-Միթէ կը լինի չվճարել, վճարելու եմ, երկար պատմութիւն ունի:

-Ինչպէս թէ:

-Դատարան դիմեցի:

-Յետոյ ինչ:

-Որոշուեց Յունիս 1,2012 դատավարութեան ներկայ լինել:

-Ներկայացել ե՞ս:

-Այո՛, այդ էլ մի քանի անգամ յետաձգելով: Այդ օրը՝ Յունիս 1, երկուշաբթի, առաւօտեան կանուխ տնից դուրս ելայ առանց կատարելու սովորոյթ դարձած մարզանքը եւ նախաճաշը: Շտապում էի, որպէսզի չլինի յանկարծ դատարանից ուշանամ:

Մեր խօսակցութիւնը ընդհատուեց մեր տիկնոջ հիւրասիրութեամբ, սուրճի հետ միասին թխուածք եւ միրգ դրուեց սեղանին, այնուհետեւ շարունակուեց մեր զրոյցը:

-Էդուարդ չասացիր գումարը որքա՞ն էր:

-Թոշակիս կէսը:

-Ի՜նչ ահագին գումար:

-Մեծ էր գումարը, որ դատարան դիմեցի երեւակայական յոյսեր փայփայելով:

-Ինչպէս կարելի է առանց արդարացնող փաստերի դատարան դիմել, »երեւակայական յոյսերով« միթէ կարելի է՞ դատ պաշտպանել:

-Անշուշտ առանց դա էլ չէր, մի որոշ բաներ նկատի ունէի, դրանով հանդերձ որ գիշերը ընտանեկան հարցով ուշ էի անկողին մտել եւ երկար ժամանակ միտքս բանել էր դատարանի հարցով, ինձ քնաթաթախ չէի զգում այդ առաւօտ, բայց մտահոգ էի արդիւնքի կապակցութեամբ, նկատելով որ ուժեղ փաստ չունեմ, նմանում էր մթութեան մէջ քար նետել, կոտրտուած անգլերէնով ինչ յաջողութիւն, կնոջս անսալով մէն-մենակ էի գնում, ախր դատարան ներկայացողը ճարտար լեզու կուզի եւ օրէնքներից տեղեակ:

Էդուարդի խօսքի մէջ ընկնելով աւելացրի.

-Այո՛, հմտութիւնը եւ փորձառութիւնը գործերի մէջ յաջողութիւն է խոստանում, սակայն

Շար.ը էջ 19

# ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ, ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ - Ա. ՀԱՅԿ

## (հատուած՝ «Արատտա-Արմինա, Հայկական Սրբազան Լեռնաշխարհի հատորից)

(Հայոց հին աստուածներ՝
դո՛ւք փրկեցէք մեզ)

Րաֆֆի

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*



*Հայկ, Հայոց Լեռնաշխարհի ամէն-հայ նախնիների նահապետ, Նայիրեան ցեղախմբերի ազգային բնիկ աստուածութիւնն է: Ըստ աւանդութեան, Հայկը հայ ժողովուրդի անուանադիրն ու նրա հնագոյն գլխաւոր աստուածն է: Իր Հայ, Հայք անունը շնորհել է կրակ ժայթքող լեռների երկրի արարչութեան ժամանակների բնիկներին: Աւանդաբար,լեռների այդ աշխարհի մի մասին էլ իր անունով՝ Հայասա, հայերի երկիր Հայաստան կոչուել: Արարչական ժամանակներից էր Հայկի ժողովուրդը այդ լեռնաշխարհում, եւ ինքն էլ այդտեղի մարդկանց համայնական հասարակարգի ժամանակների նահապետը: Լայն, խոշոր աղեղով որսի է ելել իր ցեղակից մարդկանց հետ, պինդ բազուկներով պրկած նրա աղեղից նետեր են թռել հեռու հեռուներ, խոցել վազող այծեամներին, եղնիկներին, վարազներին: Որսացած երէներին բերել են տուն, նստել գետին, գովաբանել առաջնորդին, խորոված միսը սեղաններին մատուցելու եկած հարսներին: Փառաբանել էին արեգակի լոյսը, արեգակից պայթած ճառագայթների շեղջերում վառուած եօթ գոյների հրաշքը, արբեցել աստուածների խորհուրդի հէքեաթով: Գինովցել, խենթացել կարասներում փրփրած խաղողի հիւթի ուժականութիւնից, գարիի ջրի գգլխիչ թովչանքից: Տօնական հանդէսների,ն թասերով կարմիր գինի հոսել իրենց աստուածների անդրիներին: Գինով լիքը թասերը զարկել նրանց իրաններին, փառաբանել նրանց խորհուրդը: Իրենց աստուածներն էին արարչական ժամանակներին երկիր բերել խաղողի ու ցորենի հունտերը: Հաւաստում են, որ աշխարհում հայոց երկրում են առաջինը աստուածների խմիչք խաղողից գինի պատրաստել, ցորեն ցանել, իրենց մանչերին հանապազօրեայ հացարարել: Երեւի ցեղի մարդկանց աշխարհական մի խնճոյքի ժամանակ գինիով օծել էին առաջնորդին, նրան յորջորջել Նայիրեան ցեղի նահապետ: Հայկ, հայոց նահապետ, հայերի դպրոցների պատմութեան գրքերի երեսներին, ներսի էջերում, ամուր բազուկներով աղեղը ձգած յաղթ կանգնած է: Երբ դիտում ես այն, կարծես նրանից ահա թռչելու է նետը, գնալու խոցելու իր երկիրը ստրկացնելու եկած հարաւի աստուածացուած արքայի լանջը: Հայկ Նահապետ, հայոց մայր ոստանի բարձունքի ժայռին կանգնած, աղեղն ու նետը ուղղած դէպի արեւելք, պատրաստիր աշխարհը գաւթելու եկած թշնամուն խոցելու: Հայոց Լեռնաշխարհի «Խաչ Քար», «Քարէ Սիրտ» լերան ձիւնոտ գագաթին բազմած աստուածները, խորհուրդն էին իրենց լեռներից բոցավառող կրակի, լոյսի, բնութեան: Մարդացել, մարդկային ոգին կրել, հայոց հետ կռուի ելել, ազատ պահել երկիրը, արքաների հետ արշաւել թշնամու աշխարհներ:*

*Հայկը, Արմինա-Ուրարտու-ի Խալդի աստուածն էր: Հայկ-Խալդի, Հայկական Լեռնաշխարհի լեռների սրտերից պայթած կրակի աստուածութիւնն էր: Պատմահայր Մովսէս Խորենացին Հայկին կոչել է «Յապետոսթեան Հայկ»: Յապետոս-Հեփեստոսը կրակի աստուածութիւնն է: Հայկին այդ անունը տրուել է Արտաշէսեանների գահակալութեան հելլէնիստական ժամանակներին, նրանք գիտէին Հայկի հրեղէն բնոյթը: Հայկ, որպէս հայերի անուանադիր նախնի, կոչուել է՝ «Քաջագանգուրն ու Խայտակն», որը վերաբերում է կրակին, ինչպէս հրեղէն Վահագն էր երգուել՝ «Նա հուր հեր ունէր... եւ աչկունքն էին արեգակունք»:*

*Ըստ Մովսէս Խորենացու յիշատակած ծննդաբանական ցուցակի, հայկը համարուել է Թորգոմի որդին: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ մտացածին Նոյի, նրա որդի Յաբէթի շառաւիղներ՝ Գամերի, Թիրասի, Թորգոմի որդին եղաւ Հայոց Նահապետ Հայկը: Երբեք, ինչո՞ւ են աղաւաղում արմէն-հայերի արարչական ժամանակներից եկած պատմութիւնը: Թորգոմը, Նոյի շառաւիղներից չէր, այդ անուան ծագումը կապուած է Հայկական Լեռնաշխարհի (տարկումա» քաղաք-երկրի անուան հետ: Հայկը դիցանուն է, այն պիտի համարել այդ երկրի տեղանուան հիմքում եղած «Տարքու», հայերի «Տորք» աստուածութեան որդին: Տորքի տաճարը գտնուել է Հայկական Լեռնաշխարհի Աղձնիք գաւառի, հայոց Անգեղ-Տան բերդաքաղաքում, որի համար հայերի Տորքը կոչուել է նաեւ Տորք-Անգեղ: Հայ իմաստուն մի բանաստեղծ, իր քերթուածով, Տորքի դիւցազնութեան երգն էր երկնել:*

*Խորենացին Հայկին բնութագրել է որպէս թիկնաւէտ, գանգուր մազերով, հաստ բազուկներով, քաջերի քաջը հսկաների մէջ, հզօր նետաձիգ: Բաբելոնում մասնակցել է իրենց աստծոյ գահին հասնելու երկինք խոյացող աշտարակի կառուցմանը: Չէր հանդուրժել հնազանդիլ Բէլի եւ իր Արամանեան որդուն ծնուելուց յետոյ, իր որդիներով, դուստրերով, որդիների որդիներով մօտ երեք հարիւր հոգի վերադարձել է Արարատ երկիր: Բնակւում է մի բարձրաւանդակ դաշտում, այն կոչում Հայք՝ Հայ բնակիչների երկիր, շինում մի աւան՝ Հայկաշէն անունով:*

*Բէլը, իր թագաւորութիւնը հաստատել է բոլորի վրայ: Որդիներից մէկին ուղարկել Հայկի մօտ իրեն հնազանդութեան գալու: Հայկը խստագոյնս մերժել է: Բէլը, յանդուգն ու բազմախումբ ամբոխով հասել է Հայկի բնակութեան երկրի սահմանները: Հայկը հաւաքել որդիներին, թոռներին, քաջ աղեղնաւոր մարդկանց, գնացել հասել մի աղի ծովակի ափին: Հայկը, դիմելով իր զօրքին, ասել է.*

*- Երբ մենք դուրս կը գանք Բէլի ամբոխի դէմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կը լինի Բէլը քաջերի խուռն բազմութեան մէջ, որպէսզի կամ մեռնենք եւ մեր աղխը Բէլի ծառայութեան տակ ընկնի, կամ մեր մատների յաջողութիւնը նրա վրայ ցոյց տանք, նրա ամբոխը ցրուի եւ մենք յաղթութիւն տանենք: (Խորենացի): Հայկը առաջ շարժուելով, տեսնում է Բէլին ամբոխի եւ իր միջեւ եղած տարածութեան մի բլրակի վրայ կանգնած: Աջ ու ձախ կողմերից նա շրջապատուած էր զօրականներով, որոնք խիստ սպառազինուած ու զրահաւորուած էին: Հայկը, Արամանեակին երկու եղբայրներով կ՚անգնեցնում է աջ կողմը, նրա որդի Կադմոսին ձախ կողմը, իր զօրքին շարքի պահած ինքն էլ կանգնել նրանց առաջը: Դասաւորելով իր ճակատային դիրքը մօտաւորապէս եռանկիւնի ձեւով, սկսել շարժուել դէպի Բէլի ամբոխը: Յարձակողական ու պաշտպանական եռանկիւնի մարտավարութիւն, այն եղաւ հայոց աշխարհի զօրականների մարտ վարելու եղանակը, այն եղաւ արեւելքի արքաների-արքայ, հայոց «Հայկազուն» թագաւոր Տիգրան Բ.ի Պարթեւաց ու հռոմէացւոց դէմ մղած յաղթանակ մարտերի յաջողութեան գրաւականներից մէկը: Մարտ վարելու նման եղանակը մտաւ համաշխարհային յաջողութեան գրաւականներից մէկը: Մարտ վարելու նման եղանակը մտաւ համաշխարհային ռազմավարութեան պատմութեան զինանոց: Փառքդ շատ եղնի, աստուածացած մարդ՝ Հայկ Նահապետ:*

*Մարտն էր սկսուել, քաջերի իրար զարկած վահանների ձայնը հասնում Բաբելոն, վերեւ ճօճած սրտերին իջած Միհրի լոյսն էր շանթում նրանց, մարդիկ ընկնում էին, սակայն երկու կողմերն էլ անպարտ մնում: Բէլը տեսնելով մարտի անյաջող ընթացքը, ետ է քաշւում, բարձրանում այն բլրակը, որտեղից իջել էր: Հայկը առաջ է անցնում, պինդ քաշում լայնալիճ աղեղը, եւ հինգ հարիւր մեթր հեռաւորութիւնից երեքթեւեայ նետը խոցում է Բէլի լանջը, անցնում սպառազէն թիկունքից, խրւում գետին: Բէլը ահարկու ոռնոցով տապալւում է, փչում շունչը, ամբոխը փախչում, որ այլեւս երբեք չվերադառնար հայոց երկիր:*

*Հայկը մարտի տեղը շինում է դաստակերտ, անունը դնում Հայք: Հայոց աշխարհը, Հայկի անունով կոչւում Հայք-Հայաստան: Ո՞ւր էք պատմաբաններ, ո՞ր են ձեր պալքանները, Հայքն է հայոց օրրանը, նրանք նրա հողի ծնունդն են, արարչական ժամանակներից լեռնաշխարհի բնիկ ժողովուրդը: Հայկի պատերազմը Բէլի դէմ: Արմէն-Հայերի դիւցազներգութիւնն է այն, հայկի ու իր ցեղի մարդկանց ազատատենչ պայքարի ոգու սխրանքը, իրենց աշխարհում կռուի եկած թշնամու դէմ յաղթանակի խոյանքը, իրենց նահապետի նետով ընկած օտար բռնակալի մահի եւ իրենց երկրում ազատ ապրելու աւետումը: Չորս հազար հինգ հարիւր տարիներ,*

*Շար.ը էջ 18*


ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ

ST. GREGORY ARMENIAN CHURCH
**Geragos** BANQUET HALL OF PASADENA

NEWLY REMODELED



**Now ready to host your**

- Wedding
- Baptism
- Anniversaries
- All other happy & sad events.

- Հարսանիք
- Մկրտութիւն
- Տարեդարձ
- ԵՒ ամէն ուրախ ու տխուր առիթներ:

ՎԱՀԷ 562-715-8730 VAHE

Նաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք

## ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՅՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԸ

*Երեխաներու դաստիարակութեան գործին մէջ, ծնողքին յաճախ կ'անհանգստացնէ եւ դժուարութեան առաջ կը կանգնեցնէ անոնց կողմէ տրուած պարզ, բայց հետաքրքիր հարցումները:*

*Մեկնելով ընտանեկան մթնոլորտէն, եթէ երեխան հարցեր չ'ուղղեր ծնողքին, կը նշանակէ, թէ անոր մօտ ստեղծուած է այն կամ արդէն իրեն հետաքրքրող հարցերու պատասխանը ստացած է այլ աղբիւրներէ:*

*Երեխաները շատ ուշիմ են, անոնք կը նկատեն ամէն ինչ, ուշադրութիւնը լարած կ'ուզեն գիտնալ իրենց շրջապատող ամէն ինչի մասին, իսկ երբ զգան, որ մեծերը ինչ որ բան կը թաքցնեն, ալ աւելի կը լարեն իրենց հետաքրքրութիւնը:*

*Երեխաները, մանկական ծնունդի մասին կը հարցնեն ճիշդ այնպիսի պարզութեամբ, ինչպէս Yինչու տերեւը կանանչ է կամ երկինքը կապոյտ: Այդ պատճառով մեր տուած պատասխաններն ալ պէտք է ըլլան պարզ եւ բնական: Երբ երեխան անսպասելի, տարօրինակ հարցեր տայ, ան պէտք չէ զգայ ծնողքի վարանումը, գրգռուածութիւնը, առաւել եւս զայրոյթը: Այս պարագային կարեւոր է ծնողքի ինքնատիրապետումը եւ համբերատար վերաբերմունքը, երեխային մօտ աւելորդ հետաքրքրասիրութիւն չյառաջացնելու նպատակով:*

*Երեխան կը ծնի ինչուներու հսկայական ծարաւով, անոնք կ'ուզեն գիտնալ ամէն ինչ, անոնց համար ամէն ինչ հետաքրքրական է:*

*Երեխաներու հարցադրումներուն ծնողներէն շատերը կը պատասխանեն սաստելով «Դեռ շուտ է, տակաւին պզտիկ ես այդպիսի բաներ հասկնալու համար»: Ոմանք ալ խուսափելու համար կը յօրինեն հեքիաթներ «արագիլներու» եւ «կաղամբի» մասին, բայց այդ պատասխանները երեխային կը բաւարարեն միայն որոշակի ժամանակ, յատկապէս քաղաքի մէջ ապրող երեխային:*

*Կայ այսպիսի կատակ-պատմութիւն մը. Երբ երեխան կը հարցնէ մօրը, թէ ինչպէս ծնած է եղբայրը, մայրը կը պատասխանէ, որ «Արագիլը բերած է», «Իսկ քոյրիկս», «Ան ալ կաղամբի մէջէն ելած է»: Փոքրիկը կը նեղուի ըսելով՝ «Ինչ է, մեր տան մէջ, ոչ մէկը բնական չէ ծնած»:*

*Ոմանք կու տան այլ պատասխան. թէ՝ «Քեզի գնած ենք խանութէն եւ եթէ հնազանդ չըլլաս, կը վերադարձնենք եւ ուրիշը կ'առնենք»: Այս պարագային ծնողքը երեխային հարցին պատասխանելու եւ անոր հետաքրքրութիւնը գոհացնելու փոխարէն անոր մէջ վախ կը ներշնչեն, որ օր մը անոնք կրնան լքել զինք:*

*Կը հանդիպինք նաեւ դէպքերու, երբ երեխայի քոյր կամ եղբայր ունենալու ցանկութիւնը բաւարարելու նպատակով ծնողքը կը գնեն գանձանակ, ուր պէտք է փոքրիկը դրամ հաւաքէ այդ նպատակով:*

*Անխոհեմութիւն է երեխային տալ սխալ, հեքիաթային բնոյթի պատասխաններ կամ ստել: Օր մը պզտիկը անպայման շրջապատի մէջ կը տեսնէ յղի կին, կը լսէ նաեւ կցկտուր խօսակցութիւնները երեխայի մօտալուտ ծնունդի մասին եւ իմանալով ճշմարտութիւնը, կ'ապրի հիասթափութիւն եւ կը կորսնցնէ վստահութիւնը ծնողքի հանդէպ:*

*Սակայն, երբ կ'ըսենք կարելի չէ խաբել երեխաները, այդ չի նշանակեր, որ երեխաներուն պէտք է ըսել այն ամէնը, ինչ գիտեն մեծահասակները կամ մանրամասնել անոնց ծնունդի հետ կապուած մանրամասնութիւնները:*


# ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125



# ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**


## ԹՈՒՐԻՆՃԻ ՀԻՒԹԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՄԱՆ ԴԵՂԵՐՈՒՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ



*Քաղցկեղով հիւանդներու սննդակարգին մէջ թուրինճի հիւթը աւելցնելով՝ ԱՄՆ Շիքակօ քաղաքի հիւանդանոցներուն մէջ հնարաւոր եղած է երեք անգամ զօրացնել քաղցկեղի դէմ դեղերուն ազդեցութիւնը, որ թոյլ կու տայ բժիշկներուն տկարացնել թունաւոր դեղերուն չափաբաժինն ու խուսափիլ տհաճ հետեւանքներէն: Ասիկա կը պնդեն ամերիկացի գիտնականները, որոնց հետազօտութեան արդիւնքները հրապարակուած են* Clinical Cancer Research *ամսագրին մէջ:Թուրինճի հիւթը եւ դեղամիջոցները համանման ազդեցութիւն ունին եւ կրնան զգալիօրէն աւելցնել շատ դեղամիջոցներու խտութիւնը հիւանդի արեան մէջ:*

*Երկար ժամանակ այդ տարբերակը կը դիտարկուէր իբրեւ դեղի չափաբաժնի նախատման հնարաւոր պատճառ: Մենք որոշեցինք ստուգել, թէ ինչպէս կ'ազդէ հիւթին ընդունումը հակաքաղցկեղային դեղի արդիւնաւէտութեան եւ մատչելիութեան վրայ',- բացատրած է Չիքակոյի համալսարանի գիտաբժշկական խումբի ղեկավար Էզրա Գոհէն: Գիտնականները փորձի ճշգրտութեան համար հետազօտուող հիւանդները բաժնած են երեք խումբի: Առաջին խումբին տրուած է միայն դեղը, 2-րդ խումբին՝ դեղամիջոցէն բացի միայն մէկ բաժակ թուրինճի հիւթ, իսկ 3-րդ խումբը ստացած է դեղամիջոցը եւ դեղամիջոցներուն ազդեցութիւնը զօրացնող յատուկ դեղ մը:Պարզուած է, որ երկրորդ եւ երրորդ խումբերու հիւանդներու օրկանիզմը աւելի լաւ իւրացուցած է դեղը, քան առաջին ստուգուող խումբի կամաւորներուն օրկանիզմը: Բժիշկներուն խօսքով, գէթօգոնազոլը դեղամիջոցներու ազդեցութիւնը բարելաւած է հինգ անգամ, իսկ մէկ բաժակ թուրինճի հիւթը՝ դեղի ազդեցութիւնը բարձրացուցած է մօտ 3,5 անգամ: Միայն օրական մէկ բաժակ հիւթին շնորհիւ հնարաւոր եղած է դեղին չափը նուազեցնել մինչեւ շաբաթը 16 միլիկրամի: Բժիշկները պարզած են, որ թուրինճի հիւթի նման ազդեցութիւնը պայմանաւորուած է անոր մէջ առկայ քիմիական նիւթերով, որոնք կրնան հակաքաղցկեղային դեղերու մոլեգիւլները քայքայող ստամոքսահիւթին մէջ եղած կէտերը չէզոքացնել:*

## ՏԱՍԸ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՐՆԱՆ ԽԱԽՏԵԼ ՔՈՒՆԸ

*Կան շատ կերակրատեսակներ, որոնք կը կարգաւորեն քունը, սակայն կան նաեւ այնպիսիներ, որոնք կրնան խանգարել քունը:Ստորեւ ներկայացուած է այն 10 կերակրատեսակներուն ցուցակը, որոնցմէ պէտք է խուսափիլ քնանալ առաջ.*

*1. Պաղպաղակ. Պաղպաղակը կը պարունակէ բազմաթիւ ճարպեր եւ շաքար, որոնք մարդուն կը հաղորդեն ջերմուժ, որ սպառելու ժամանակ չի տրուիր օրկանիզմին՝ քնանալէ առաջ: Բացի անկէ, ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ շատ շաքար պարունակող կերակրատեսակները կրնան գիշերային մղձաւանջի պատճառ դառնալ:*

*2. Նեխուր: Նեխուրը (հովանոցաւորներու կարգին բանջարաբոյս) կը համարուի բնական միզամուղ միջոց, այդ պատճառով խորհուրդ չի տրուիր օգտագործել զայն քնանալէն առաջ:*

*3. Մաքարոնեղէն: Ան կը պարունակէ բազմաթիւ ածխաջրեր, եւ եթէ զայն ուտելէն ետք անմիջապէս քնանաք, ապա այդ ամէնը կը վերածուի ճարպի: Բացի այդ, մաքարոնի շատ մը տեսակներ ունին բարձր ջերմուժի ցուցանիշ, ինչ որ կրնայ արեան մէջ առկայ շաքարի տատանման պատճառ դառնալ:*

*4. Փիցցա: Փիցցան կը ծանրաբեռնէ ստամոքսը: Անոր մէջ առկայ լոլիկի սոսը ունի բարձր մակարդակի թթուայնութիւն, որ կրնայ յանգեցնել այրոցի:*

*5. Շաքարեղէն: Ինչպէս արդէն նշուած էր, քաղցրաւենիքը կրնայ գիշերային մղձաւանջի պատճառ դառ-նալ:*

*6. Հացահատիկեղէն: Հացահատիկեղէնը կը պարունակէ շաքարի բարձր քանակութիւն եւ ածխաջրեր:*

*7. Սխտորը: Սխտորէն պէտք է խուսափիլ երկու պատճառով. առաջինը՝ այն կրնայ տհաճ ըլլալ զուգընկերոջ համար, երկրորդը՝ սխտորը կը յանգեցնէ այրոցի:*

*8. Մուգ տուրմ: Մուգ տուրմը կը պարունակէ քաֆէին, որ առոյգացնող ազդեցութիւն ունի:*

*9. Ոգելից խմիչք: Կայ թիւր կարծիք, որ ոգելից խմիչքը կը նպաստէ խոր քնանալուն: Խմիչքը իսկապէս կ'օգնէ քնանալուն, սակայն կը խախտէ երկար եւ հանգիստ քունը: Բացի այդ, այն մարդիկ, որոնք յաճախակի կ'օգտագործեն ոգելից խմիչքներ՝ լաւ քնելու համար, կախուածութեան մէջ կ'իյնան:*

*10. Միսը: Կարմիր միսը կը պարունակէ սպիտակուցներ եւ ճարպեր, որոնք դժուարամարս են: Սակայն պէտք չէ խուսափիլ միսէն, քանի որ ան հարուստ է երկաթով եւ այլ բաղադրիչներով:*




# ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

*Շարունակուածէջ 16-էն*

Հայկին գրկած որպէս իրենց ցեղի նահապետ, նրա ոգին իրենց սրտերում քայլում են պատմութեան ճամբաներով:

Արմէն-Հայերին համարում են Քրիստոսէ վեց-եօթ դարեր առաջ Պալքանեան Յունաստանից գաղթած եւ Հայկական Լեռնաշխարհ թափանցած ժողովուրդ: Հապա՛, դրանից շատ առաջ, 2492 թուականին հայկի ու իր «Աղխի» կռիւը հարաւի Բաբելոնի հզօր արքայ Բէլի դէմ: Հայկի «աղխ»ը, հայոց այդ դիւցազներգութիւնը, ապացոյցն է, որ Հայկն ու հայ ժողովուրդը եղել են Հարք երկրում՝ Հայկական Լեռնաշխարհի սրտում, Բէլի Ասուրա-բաբելական աշխարհակալութեան ընդարձակման ժամանակաշրջանում եւ դեռ դրանից հազար-հազար տարիներ առաջ: Հայկի ու իր «աղխի» կռուի դիւցազներգութիւնը, պաշտպանական ռազմավարութիւնը, իր ցեղի «Ասք»ի մատեանի ամենափառաւոր էջն է:

Աշխարհակալ Բաբելոնի հզօր արքայի դէմ յաղթական պատերազմ մղող ցեղ, Ասորեստանի արքաների դէմ պատերազմող Արամ Նահապետ, որպէս կազմաւորուած ազգ, արմէն-հայերը դեռեւս արարչութեան առէնուայ բնիկ ժողովուրդ են: Վճռող ապացոյցներից է վերոյիշեալը, նրանց համարելու համար այդ լեռնաշխարհի բնիկ, նաեւ ժխտելու շատ աւելի ուշ ժամանակ Պալքաններից նրանց եկած լինելու վարկածը:

Եւ Հայկի զարմից Արամ-Արամէն, իր նախնիների Հարք-Հայքերում դաշնակցելով Նայիրեան իշխանների հետ ստեղծել է Արմինա պետութիւնը: Պարսկաստանի Աքեմենեաններ հզօր արքայ՝ Դարեհը, ժայռի վրայի իր գիրով պիտի յոխորտար, որ ճնշել էր Արմինա երկրի եւ մի «Արմին» Արախա անունով Բաբելոնի տիրակալի միացեալ ապստամբութիւնը իր երկրի դէմ: Դժխեմ, անգիտացան պէտք պատմաբաններ, մեղանչելով պատմական ճշմարտութեան դէմ հնարել են Ուրարտացի, Ուրարտու պետութիւնը: Հայոց իմաստուններ, ե՞րբ էք ժայռին «գամելու» նրանց կեղծիքը: Այո, Խալդի-Հայկի «աղխ»ն է դեռեւս արարչութեան ժամանակներից եղել բնիկը Հայոց Լեռնաշխարհի: Այդ նրանք են, որ հազար-հազար տարիներ այն պաշտպանել հիւսիսի ու արեւելքի բարբարոսների եւ արեւմուտքի հզօր տիրակալների յարձակումներից: Այդ նրանք էին, կռուի ելել հարաւի ասուրա-բաբելական նուաճումների դէմ, արգելակել նրանց տարածուելը դէպի հիւսիս, իրենց «մի Արմին» պատռել նրանց Բաբելոնի պարիսպները, թագաւորել այնտեղ: Այո, Բէլի դէմ մարտնչած Հայկն էր իր «աղխ»ով զսպել նրանց առաջխաղացումը իրենց լեռնոտ երկրի հարաւի ստորոտներին:

Եւ հիմա, Ռուսաստանի եւ Վրաց «Վիրք» երկրի երկու իմաստուն պատմաբաններ բազում փաստարկներով ապացուցել են, որ Փոքր Ասիայի արեւելքի մի մասը ու Հայկական Լեռնաշխարհը օրրանն է այն ժողովուրդների, որոնք մինչեւ Հնդկաստան ու Եւրոպայի Ատլանտեան ովկիանոսի ափեր են գնացել: Նրանց կոչեցին Հնդեւրոպական ժողովուրդներ: Եւ ինչպէ՞ս, ինչո՞ւ, արմէն-հայ կոչուած Նայիրեաններ գնային հեռուներ եւ յետոյ ետ վերադառնային իրենց ծննդավայր լեռների երկիր: Արմէն-հայ, այդ լեռների երկիրը արարչական ժամանակների քու բնօրրանն է, ինչո՞ւ քու նախնիների նման նրա համար մարտի չելար, քու սրտում մարե՞լ էին աստուածացած Հայկ-Խալդի նահապետի ոգու երակի բոցերը:

Հայկական Լեռնաշխարհը խաչմերուկ էր տարբեր քաղաքակրթութիւնների Այնտեղ էին թափանցել օտար աստուածութիւններ: Բնիկ «Հայկ» աստուածը բարձրացել էր երկինք, իր շուրջը հաւաքել աստղեր դարձել՝ «Հայկ Համաստեղութիւն»: Տիեզերքի իր ճանապարհից աստղեր են իջնում Հայոց Լեռնաշխարհի երկնակամար, Հայկ Նահապետի ոգու հուրով շառագունելու «ար»-ի մարդկանց սրտերը: Հայոց աշխարհի Հայկազուն Տիգրան Բ. արեւելքի արքաների-արքան, այդ աստղի ոգին գրկած իր քաջերին տարաւ ծովերից ծով: Հազար-հազարա տարիներ յետոյ, հայոց Լեռնաշխարհի երկնակամարով նորէն լուսոտ աստղ անցաւ, հայը զէնք վերցրեց, իր մի փշուր հողին բերաւ հայոց աշխարհից խլուած մի լեռնոտ երկրի հողն հայրենեաց: Հայոց կռիւը դեռ չի աւարտուել, կռիւ պիտի լինի իրենց «Քարէ Խաչ», «Քարէ Սիրտ» ոգեղինացած լերան համար:


**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506








**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680**


**REQUEST FOR PROPOSALS (RFP #7566) NEW DANA STRAND PHASE IV REDEVELOPMENT**

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified for-profit or non-profit developers of affordable housing to develop a multi-family housing site. Copy of the RFP may be obtained beginning July 23, 2012 via http://www.hacla.org/ps/ or call 252-5405. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., by September 7, 2012.

8/2, 8/9/12
CNS-2349321#
MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS 2012 CONTINUUM OF CARE HOMELESS ASSISTANCE PROGRAMS**

Los Angeles Homeless Services Authority (LAHSA) in partnership with 4 Housing Authorities, including the Housing Authority of the City of Los Angeles, invites proposals for the Continuum of Care's 2012 application to HUD for the Shelter Plus Care and Section 8 Moderate Rehabilitation Single Room Occupancy programs. A copy of the RFP may be obtained by the end of the day on July 27, 2012 at http://www.lahsa.org/fundingopportunities.asp or by calling (213) 225-6573. The proposal submittal deadline is August 24, 2012 at 3 pm.

8/9, 8/16/12
CNS-2353986#
MASSIS WEEKLY

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 7796-A WINDOW SHADES**

The Housing Authority of the City of Los Angeles seeks competitive bids from qualified firms interested in providing window shades to the Authority. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/ncg Bids will be accepted by the General Services Dept at 2600 Wilshire Blvd, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, September 14, 2012.

8/16, 8/23/12
CNS-2357666#
MASSIS WEEKLY

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 1721-A GENERAL CONSTRUCTION FOR ALL HACLA PROPERTIES AND FACILITIES**

The Housing Authority of the City of Los Angeles invites vendors to submit firm fixed bids from qualified firms to perform general construction for all HACLA properties and facilities. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, September 7, 2012.

8/16, 8/23/12
CNS-2357413#
MASSIS WEEKLY

**INVITATION FOR BIDS (IFB) No. 1720-A HARDWOOD FLOOR REPAIRS AT VARIOUS PUBLIC HOUSING DEVELOPMENTS**

The Housing Authority of the City of Los Angeles invites vendors to submit firm fixed price bids for Hardwood Floor Repairs at various public Housing Developments. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, August 31, 2012.

8/16, 8/23/12
CNS-2357367#
MASSIS WEEKLY

# ՅԻՇՈՒՄ ԵՄ ՆՐԱ ԲԱՐԵՀՈԳԻ ԴԷՄՔԸ

*Շարունակուած էջ 15-էն*

դատարանին կապուող փաստն է յաղթում:

-Իրաւացի ես, չտիրապետելով այդ զէնքին, ուղեղս սլացիկ կանգ էր առնում այն ենթադրեալ համոզումի վրայ, որ երբեմն միլիցիան մոռանում կամ տարբեր պատճառներով չի կարողանում ներկայանալ մեղադրեալի մեղքը հաստատելու, որի շնորհիւ հատ ու կենտ մարդիկ ներուել էին տուգանք վճարելուց, դրան հիմնուելուց բացի, ուրիշի օգնութեամբ անգլերէնով պաշտպանողական կարճ գրութիւն էի պատրաստել: Պարսկաստանեան կեանքումս ոչ մի հարցով դատարան եւ ոստիկանատուն չէի դիմել կամ կանչուել, եօթ տարուայ անցեալով սա երկրորդ անգամն էր, (մէկը՝ յետիոտն թարթող ճրագն անցնելիս, երկրորդն էլ սա), դատարան էի դիմում երթեւեկութեան կանոնի խախտման համար, դատարան էի դիմում ինձ արդարացնելու կամ եթէ կարելի լինէր տուգանքի սակը մեղմելու նպատակով, ախր Ամերիկայում տուգանքները շատ բարձր են, եւ ահա այս օրէնսդրութեան պատճառով մարդիկ շատ զգոյշ են շարժւում:

-Օրէնքի նկատմամբ խստութիւնը շատ էլ լաւ է, ապահովութիւն է եւ հանգստութիւն, լա՛ւ, ո՞ր դատարանումն էիր ներկայացել:

-Մեր քաղաքից շատ հեռու Ջացուըրդ-Chastworth կոչուող դատարանը: Ինչպէս ասացի, այդ օրը շուտ տնից դուրս ելայ: Արեւը դեռ լիիրաւ չէր փռուել քաղաքի վրայ, Սանլանդը շրջապատուած լինելով լեռներով, արեւը դեռ սարերի ետեւումն էր, արեւածագը փառքով կատարուել էր, նրա հուր գնդից նրբագոյնս ոսկեաշերտեր էին նշմարւում երկնակամարի վրայ, ստուերները երկար դեռ տրար չէին եկել: Նախքան ազատուղի մտնելս անցնում եմ Սանլանդի մի քանի փողոցներից եզերուած սիգապատ եւ ծառերով խիտ առանձնատուներով:

Ընդմիջելով նրա խօսքին հարց եմ տալիս՝

-Ի՞նչ գիտես Սանլանդի մասին:

-Մի բաներ լսել եմ, բայց լաւ կը լինի դու ասես:

-Ես էլ ոչ աւելին քո չափ գիտեմ, ինչպէս գիտես՝ Սանլանդը նախկինում փոքրիկ աւան է եղել, լեռներով է շրջապատուած, օդը համեմատաբար աւելի զով է, բնութիւնը գրաւիչ, Սանլանդից մշտահոս գետ է անցնում, ափունքներում ծառախիտ տեսարաններ առաջացնելով, գեղափետուր թռչնակների զբօսավայր եւ բնօրրան են, նրա բնակչութիւնը հետզհետէ մեծացել եւ աճել է շնորհիւ Հայաստանից, Պարսկաստանից եւ այլ երկրներից արտագաղթող հայերով: Սանլանդում ձիաբուծութեամբ զբաղուող ագարակներ կան մեր բնակավայրերից հեռու վայրերում:

-Հենց այսքա՞նը:

-Նոր քաղաք է ոչ երկար անցեալով, պատմութիւնն էլ կարճ կը լինի, ես լոկ որոշ զբօսաշրջիկութեան տեղեկութիւններ փոխանցեցի, լա՛ւ, քո պատմութիւնը շարունակի՛ր:

-Մինչեւ ազատուղի հասնելս փողոցներից եմ գնում, առաւօտեան կանուխ նկատւում է մարդիկ աշխատանքի են գնում: Նախքան Ամերիկա գալս կարծում էի, որ աշխատաւորը Ամերիկայում ամէն տեսակ ապահովութիւն ունի եւ առանց վաղուայ համար մտահոգուելու կեանք է ապրում ընտանիքով ուրախ, սակայն նկատի առնելով միջին բիզնէսի- գործարքի շատ գործաւորները եւ շինարարութեանց բանուորները այդ ապահովութիւնը այնքան էլ գոհացուցիչ չէ իրենց համար, նրանք մտահոգ են վաղուայ աշխատանքի համար:

-Սիրելի Էդուարդ քո խնդրին չառնչուող հարցեր ես արծարծում, ով չգիտի այս վերջին տարիների տնտեսական տագնապը դժուարութիւններ է ստեղծել տարբեր ոլորտներում, քոնն ասա՛, տեսնենք վերջը ինչ արեցիր:

-Երբ հասայ դատարան արդէն արփին իր գեղեցիկ թեւերն էր տարածել քաղաքի վրայ, ծառերի եւ շէնքերի կատարները ողողուած էին բնութեան հրաշափառ արեգակի անտեսանելի մետաքսեայ նուրբ թելերով, օդը զով բուսականութեան բուրմունքով արբեցած, տեսայ միայն երկու հոգի են ինձ կանխել, մէկը տղամարդ, որը ծառի տակ թիկ տուած գիրք էր ընթերցում, իսկ միւսը մի երիտասարդ օրիորդ ուղղակի դատարանի շէնքի դիմացը ծալապատիկ նստած գետնի վրայ, կարելի է ասել «կիսամերկ», գլուխը մտցրած բջիջային հեռախօսի մէջ:

-Ընդհանրապէս արեւմուտքում ով ինչպէս սիրում է, այնպէս էլ ապրում է, միայն թէ ուրիշին չխանգարի, նեղութեան պատճառ չլինի, սակայն չչափաւորուած ազատութիւնը բարոյական արժէքների անտեսում եւ անտարբերութիւն է առաջ բերում, մեզ արեւելքցիներիս այս տեսակ ազատութիւնը տհաճ է թւում, իսկ իրենց համար շատ սովորական:

-Դատարանի շէնքը դրսից մի սպիտակ մարմարապատ հոյակապ եւ հսկայ կառոյց էր երեւում, շուրջ բոլորը ծառ ու ծաղիկ եւ մեքենաների կանգառի ընդարձակ գծաքաշուած տեղերով: Այն ինչ իմ ուշադրութիւնը գրաւեց, դատարանի շէնքի ճիշտ դիմացը, ոչ շատ հեռու, մի տասից աւելի հաստ ու բեստ ու սլացիկ արմաւենիների շարանն էր, որոնց նմանը տեսել էի Իրանի Խուզստանում, բոլորն էլ պտղաւորուած, հսկայ ճութերի վրայ բազմաթիւ հասած ոսկեհատ արմաւներով բեռնաւորուած, որոնցից նկատւում էր հատիկներ գետնին թափած եւ ոտքի կոխան դարձած, համտեսեցի, իրական արմաւ խոշոր ու կակուղ: Իմ մօտ հարց առաջացաւ, թէ ինչո՞ւ արմաւենիներ, այն էլ դատարանի դիմացը, որոնց պտուղները թափելով աղտոտում են գետինը, քո խելքն ի՞նչ է կտրում Ռուբէ՞ն.

-Ես գուշակում եմ, որ նախքան շէնքի կառոյցը այդ ծառերն ի սկզբանէ եղել եւ ափսոսացել են հատել:

-Ես էլ հէնց այդ կարծիքին եմ: Սա ապացուցում է մասնաւոր հոգատարութիւնը բուսականութեան եւ բնութեան պարգեւների նկատմամբ:

-Լաւ, շարունակի՛ր այդ քո հետաքրքիր պատմութիւնը:

-Արտաքուստ շէնքի կառոյցը եւ շրջապատը իր յարմարաւոր դասաւորութեամբ գրաւել էր ինձ, սպասում էի ներքուստն էլ տեսնելու եւ իմ դատին ներկայանալու: Հետզհետէ դիմողների թիւը շատանում էր, երկար շարք կազմուեց զարմանազան մարդկանցով, ես երրորդն էի: Ժամի 8.30-ին դատ ու դատաստանի դռները բացուեցին, խափշիկ զինուորական պաշտօնեան մեզ ներս հրաւիրեց, մարդիկ մէկ-մէկ գործիքի տակից անցնելով ստուգւում եւ դէպի տարբեր բաժանմունքներ եւ ներքնայարկ էին առաջնորդւում սանդուխներով: Ընդարձակ գաւիթ, բարձր առաստաղ եւ լայն միջանցք, երկար պատշգամբանման տեղամասում պաշտօնեաները ընդունում էին հայցւորներին, ես ելեկտրական աստիճաններից իջայ ներքեւ, մի քանի սրահներ կողք-կողքի, որոնց դռան մօտ փակցուած էին անուններ ցանկեր, որոնց համեմատ դիմողները պիտի ներկայանային, ամէն ինչ դասաւորուած ու ծրագրուած: Ներքեւի գաւիթը լցուեց մարդկանցով, հայեր նկատեցի, սիրելի Ռուբէն էդ ինչպէս է, որ հայերս հեռուից իրար ճանաչում ենք:

-Հաւանաբար վեցերորդ զգայարանի շնորհիւ է այդ ճանաչողութիւնը ազդարարւում, գուցէ գտարիւն հայկական գեն կրողների պարագային է այդպէս:

-Իմ կարծիքով՝ հայկական քիթը, աչքերը, ճակատը խօսուն ճանաչողութիւն են արձագանքում:

-Կարելի է եւ սա եւ նա:

-Դատադահլիճումն եմ՝ լեցուն դիմորդներով: Նախքան դատաւորի ներկայանալը աֆիցեր մէկը երկար ու բարակ օրէնքներ է բացատրում, լաւ չէի հասկանում նրա ասածը, տեղափոխուեցի մի հայ երիտասարդի մօտ, խնդրեցի՝ ինձ օգնի, սիրով ընդառաջուեց: Դատավարութիւնը պաշտօնականացաւ դատաւորի ժամանումով, նա կին էր, բարձրահասակ լեցուն կազմուածքով, իմ տեսքով մեքսիքացի երեւաց, յայտարարեց՝ - այսօր միլիցաները չեն ներկայանալու, ովքեր իրենց մեղաւոր(Guilty) են ընդունում իրենց համար վճիռ կը կայացուի, իսկ նրանք որոնք կարծում են թիւրիմացութիւն է պատահել իրենց նկատմամբ եւ մեղաւոր չեն սեպում (No guilty) իրենց, օր կը որոշուի միլիցիայի ներկայութեամբ: Նրա ծանուցումը այդ մէկ իմ յոյսը ջուրը թափեց, ես ընդունեցի իմ մեղաւոր լինելս այն համոզումով, որ երբ դատաւորը ինձ լսի, սպասելի է որ ուշադրութեան արժանացնի: Հերթն ինձ հասաւ, ատեան ներկայացայ, դատաւորը հարց ուղղեց՝ - դու քեզ մեղաւոր ընդունում ե՞ս, ասացի -այո՛, բայց թոյլտուութիւն եմ խնդրում դատապաշտպան գրութիւնս կարդալ:

-Ի՞նչ եղաւ, դատաւորը թոյլադրե՞ց:

-Այո՛, առաջարկեց կարդալ:

-Կարդալ սկսեցի, Նախ շնորհակալութիւն յայտնեցի դատարանին եւ միլիցիային, որ յետամուտ են երթեւեկութեան օրէնքների ճշգրիտ գործադրման, ապա շարունակեցի կարդալս՝ այս օրինակ խախտման առաջին անգամս է, յետոյ զաւիթափին մեքենան ինքնաբերաբար արագ ընթացք է վերցրել, սակայն անմիջապէս հսկել եմ, յետոյ ցածր եկամուտով թոշակառու եմ, սպասում եմ մեծարգոյ դատաւորը վերատեսութեան ենթարկի որոշուածը:

Ես անհամբեր արդիւնքին հարց տւի.

-Ինչ որոշում կայացրեց:

-Նա չնչին գումար զեղչեց եւ թոյլ տուեց չորս ամսից յետոյ գումարը վճարուի երթեւեկութեան կանոնների ուսուցման դասարան յաճախելու արդիւնքի տեղեկագիրը ներկայացնելով: Այս եղաւ իմ դատարանի վճիռը:

-Իմ կարծիքով դատաւորը ճիշտ էլ արել է, ըստ օրէնքի իր պաշտօնն է կատարել առանց զգացումային մղումով, դատարանը արդար դատաստան տեսնելու սուրբ տաճար է, ոչ թէ գթասրտութեան, կողմնապաշտութեան եւ սովորական վայր:

-Ես էլ համոզուած եմ դրան, թող որ այդպէս լինի եւ ոչ մէկ արդար մարդ չտուժի, արդարութեան անտեսողը սադայէլի ծնունդ է:

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԻՍ ՏԷՄԻՐՃԵԱՆի մահուան տխուր առիթով Իրաւաբան եւ Տիկ. Ռուբէն Աւշարեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն:

Այս առթիւ ... Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104

«ՔԱՋ ՆԱԶԱՐ»
ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից




ARMENIAN INDEPENDENCE DAY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
Փառատօն
FESTIVAL
SUNDAY SEPTEMBER
16, 2012
VERDUGO PARK
GLENDALE
621 Cañada Blvd. Glendale, CA 91208
Starting at 11:00 am
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your vender booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938
Sponsors
amga
ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC
MGN | Paradise, Inc.
HIGH VISION
WELLS FARGO
Glendale West Pharmacy and Medical Supply
ZONE TO-GO
CEDARLANE
Great Tasting Natural & Organic Foods
AABC
Մասիս
www.massispost.com
Vrej Pastry
TAMARA
SARKIS